



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Unpublished U.

Unpublished F.

George R. Rouse 1855-1880.

U

1931

1999

ԱՂԻՔՍԱՆԴՐ Բ.

Կ Ա Յ Ս Ր Ռ Ո Ւ Ս Ի Ո Յ

1855—1880.

Ա. Զ. Յ. ՍՈՒՐԵԱՆՑ.

ՄՈՍԿՎԱ:

1880.

Ltn

1931


ԱՂԷՔՍԱՆԴՐ Բ.

Կ Ա Յ Ս Ր Ռ Ո Ւ Ս Ի Ո Յ

1855—1880.

Ա. Բ. Յ. ՍՈՒԿԵՆՆԵՐՆՑ.

№ 29



ՄՈՍԿՎԱ:

Ի Տպարանի Ե. ԳՐԱԳԻՏԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼԻ ԳՐԱԳԻՏԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ:

1880.

Дозволено Цензурою 26 Апрелья 1880 г. С.-Петербургъ.

41931-60

38. 4939

ՌՈՒՍԵՍԵՆԸ ներկայ 1880 թուականի փետրուարի 19. օրը տօնեց իւր խնամակալ Ապսեր Եղէքսանդր Բ. քսանեհինգ տարեց թագաւորութեան սարեգարձը:

Օգոստափառ Ապսեր ամբողջ քառորդ դարու թագաւորութեան պատմութիւնը մի անպատ շարք է այնպիսի իմաստուն տեսչութեան և մարդասէր գործերի, որ Նա իւր վեհափառ նախորդների մէջ ամենաբարձր տեղը բռնեց, մշտապէս ժառանգելով ժողովրդեան բերանից Իւր անմահ անուան վերայ շայրենեաց Խնամակալի, Սարկաց Եղատարարի և Քրիստոնէից Պաշտպանի կոչումները:

Ռուսաստանի բարեբաղդ հպատակների ընդհանրութեան հետ և շայ ազգը երախտագարա հողով տօնից այդ բարեբաստիկ օրը և իւր Աւեհափառ շայրապետի և բոլոր եկեղեցւոյ ուխտի հետ մատոց երկնաւոր թագաւորին իւր աղերսը երկրաւոր թագաւորի կենաց երկարութեան համար:

Նորա ձայնակից եղաւ Օսմանեան երկրի շայրը իւր անընկճելի Պսարիարդից մինչև կենդանի նահասակ Աննեցին և Մշեցին, որոնք յուսահատու-

Թեան և սահուն զուր հասած, արդարութիւն և իրաւունք են խնդրում:

Աղէքսանդր Բ. Այսեր քսանեհինգաւարդ յոբելներ շատերին համար առիթ եղաւ գրել Նորա Թագաւորութեան պատմութիւնը ուս և այլ լ՛զուով նոյնպէս և ինձ—հայերէն այս զբքոյիլը և Աղէքսանդր Բ. վերնագրով պսակել նորա ճակատը:

Աղէքսանդր Բ. Այսեր Թագաւորութեան պատմութիւնը նոյն է թէ այս աշխարհաշէն Թագաւորի բարենորոգութիւնների շնորհիւ Ռուսաստանի զարգացման պատմութիւնը:

Այս բարենորոգութիւնների արդիւնքը վայելց և վայելում է Ռուսիոյ հպատակ միլիոնից աւել շայոյ ազգը: Թողնենք շայերի ստացած զանազան արտօնութիւնները, որ Ռուսաց Այսերը տալիս էին այլ և այլ ժամանակ, շայր Ռուսաստանում, ինչպէս ամենայն ազգ և լեզու (մտնաւոր բացառութեամբ), վաշելում է նոյն իսկ Ռուս ազգի հաւասար պետութեան հովանաւորութիւնը և օրէնքի պաշտպանութիւնը. որովհետեւ Ռուսիոյ օրէնքների հիմն է հպատակ ազգերի իրաւունքների համահաւասարութիւնը:

Շայաստանեաց Ակեղեցին ունի իւր աւանձին Ահհափառ Երաւասացը և եկեղեցւոյ անկախ տեսչութիւնը, որին ստանձնած է ազգին կրօնական և բարոյական հսկողութիւնը և ազգային եկեղեցական և ժողովրդական կրթարանները: Շայ իշխանը, Շայ ալ նուականը, Շայ զինուորականը, Շայ պաշտօնասէրը,

ուսումնականը, վաճառականը, քաղաքացին և զիւրացին վայելում են պետութեան օրէնքի տուած ընդհանուր իրաւունքը և պաշտպանութիւնը:

Գարով ներկայ Օգոստոսի աւ Աղէքսանդր Բ. Այսեր քսանեհինգաւարդ բարենորոգութիւններին, պէտք է ասել, թէ այժմ Ռուսաստանի ամէն մի հպատակ ազգութիւն առաւել ապահով է իւր ինքնուրուութիւնը պահպանելու: Այժմ անհետացան մի քանի հնամուկ մարդկանց երեւակոյական ջնողքը, որոնք, չնայելով թէ պետութեան օրէնքը ի սկզբանէ անտի ճանաչած էր ամենայն հպատակի իւր ազգութիւնը և կրօնքը ազատօրէն պահպանելու իրաւունքը, կարծում էին տեսնել Ռուսաստանի ապագայ փառքը և զօրութիւնը նորա կրօնական միութեան մէջ: Այլ իրջին ժամանակներում ակներև կերպով յաղթութիւն հանդիսացաւ Ռուսաստանի մէջ այն ազատամիտ ուղղութիւնը, որ ձգտում է ոչ արուեստական միջոցներով ձուլել հայրենեաց միութիւնը, այլ ստալով նորա կազմող բազմութիւն ցեղերին զարգանալու ազատ միջոց, իւրեանց իսկ բնական պահանջմունքներին համեմատ, կազմել նոյնից մի հզօր պետութեան ամբողջութիւն, իբրև բազմերանդ ծաղիկներից մի փունջ: Այլ ինչպէս ամէն ծաղիկ իւր զունով և բուրմունքով, այնպէս և իւրաքանչիւր ազգ իւր կրօնքով և լեզուով այդ միութեան մէջ, իւրեանց աւանձնականութիւնները պահպանելով, պետութեան անդամներ լինին—ինչպէս են պետութիւնները ընդհանուր մարդկութեան:

Այս իսկ նպատակաւ էր Աղէքսանդր Բ. Ապսեր արած բարենորոգութիւնները, որոնց մէջ ճանաչում ենք Ռուսաստանի ամէն ազգութիւնների զարգացման և առաջադիմութեան միջոցներ: Մի առանձին ակնարկ դարձնենք Հայ ազգի վերաբերմամբ:

Ա. Անդրկովկասեան նահանգներում Արաց թագաւորութեան ժամանակ կային հայ իշխաններ, կային և հայ ստրուկներ, որոնք նոյն իսկ կարգաւ անցան Ռուսաց տիրապետութեան տակ: Ստրուկների ազատութիւնը Աղէքսանդր Բ. Ապսեր ամենամեծ բարերարութիւնն էր Ռուսաստանի համար: Այլը՝ Նորա հրովարտակիր հրատարակեցաւ Անդրկովկասի նահանգներում հազարաւոր Հայերի ստրկութեան հանդոյցը քանդեց և ազատութիւն շնորհեց: Վանի մայրեր օրհնեցին Ապսեր կեանքը և քանի արժանաւոր մարդիկ ծնաւ ազատութիւնը աշխարհի համար:

Բ. Պիւղանտեսական և քաղաքային ինքնավարութեան նոր օրէնքի հաստատութեամբ Ռուսաստանի ժողովրդեան առաջ մեծ ասպարէզ բացուեցաւ իւր սեպհական ուժովը կրթութեան, քաղաքականութեան վաճառականութեան և արհեստների մէջ առաջնաւոր և երկիրը շինութիւններով և ճանապարհներով բարգաւաճեցներու: Աղէքսանդր Բ. Ապսեր ժողովրդական հոգւով արած այդ կանոնադրութեան շնորհիւ կարճ միջոցում Ռուսաստանի զաւառների նկատելի կերպիւ

ծաղկիր՝ երաշխաւոր է մեզ թէ, երբ Անդրկովկասումը ընդհանրանայ և հաստատուի այդ կանոնադրութիւնը, Հայը՝ իբրև տեղի ազգաբնակութեան մի զօրեղ տարր, առաւել մեծ բարերարդրութիւն պիտի փայլէ այդ ինքնավարութեան նոր միջոցներովը: Հայը թէպէտ այժմ ևս ունի իւր փայլչազարդ եկեղեցին և հոգևոր տեսչութեան խնամքին ենթադրեալ դպրոցը, բայց քաղաքային և զիւրային անտեսական ինքնավարութիւնը — որ յուսալիէ շուտ օրով Աովկասում ևս հաստատուի — ընդարձակ միջոց կբանայ հայ ժողովրդեան առաջ, ևս առաւել բազմացներու դպրոցների և արհեստանոցների թիւը այլ և այլ ուղղութիւնով և ձեռնհաս լինել նոցա իւր իսկ անտեսական միջոցներովը, ինչպէս և սպասովել եկեղեցականների վեճակը, որ ներկայումս շատ աննախանձնելի է: Հայը կբազմացնէ բարեգործական ընկերութիւնների թիւը, որ ցայսօր նորա մէջ շատ հազուադիւտ երևոյթ է:

Գ. Նոր դատաստանական օրէնքի առաջ ամենայն ազգ և լեզու հաւասարաչափ փայելում է պաշտպանութիւն և անաչառ է ամեն մի անպաշտպան դատապարտեալի համար: Ոչ ազգութիւն, ոչ կրօնական խորութիւն մերժում է դատը և վկային բացառութիւնը: Հայի զարգացեալ մի մասնը դատարանների մէջ արդէն իբրև պաշտօնական անձինք, իբրև փաստաբան և մտերմատար, նշանաւոր դեր է խաղում Անդրկովկասի նահանգներումը, և հեռի չէ այն ժա-

մանակը, երբ անդական ժողովրդեան ընդհանուր զարգացումը պէտք է համապատասխանէ և այն պահանջմունքին, որ ժողովուրդը ևս՝ բաղմերով դասարանների մէջ հսկող լինի իրաւանց և արդարութեան:

Կ. Ընդհանուր զինուորագրութեան պարտաւորութիւնը, հայ ազգի վերաբերմամբ, ունի իւր զօրեղ ազդեցութիւնը նորա Ֆիզիկական և բարոյական կեանքին վերայ: Արդէն այս օրէնքը հրատարակուելից առաջ Հայր ունէր մի ահագին շարք զօրապետների և զինուորական հերոսների, որոնք իրաւունք կտան պարծել թէ Հայաստան միշտ քաջերի մայր է եղած: Նորա Անդրկովկասեան բաժինը, վայելելով Ռուսիոյ Ապսերութեան հովանաւորութիւնը, սնուցել է քաջեր, որոնք իրբև Ռուսաստանի զինուց և փառաց անրնկծեք և հաւասարիմ ախոյեաններ, երկզլխեան արծւոյ դրօշակի տակ մեծամեծ յաղթանակներ են գործել և անմահ անուն են ժառանգել ժամանակակից պատմութեան մէջ: Այժմ ևս հայ կորիճի համար ներկայ զինուորանոցը Ֆիզիքական և ոգեկան ուժերը զարգացնելու մի նոր միջոց լինելով, պատրաստում է նորան զինակցելու հայրենեաց պաշտպանութեան սուրբ գործին, մինչդեռ ցաւելով պէտք է ասել թէ նորա ներկայ առանին կենցաղաւարութեան եզանակը արիւթեան հոգին չթուլացնելու համար ոչ մի այլ նպաստաւոր միջոց չէ ներկայացնում:

Ե. Ռուսաստանի այս վերջին տարիներումն աւրած լուսաւորութեան քայլի մէջ Հայ մանուկը իւր բնական աշխուժութեամբ և ընդունակութեամբ մեծ առաջադիմութիւն է գործել: Լուսաւորութեան տաճարը Ռուսաստանին պարգևել է Հայերից կրթեալ անձինք, որոնք պետութեան պաշտօնների մէջ իւրեանց զարգացման և հանձարի համեմատ բարձր տեղ են բռնել և ընդհանրութեան մէջ պիտանի անդամ են եղել: Մոսկիայի Արևելեան Ազգաց Ընդհանուր ճեմարանի, Տիֆլիսի Սեբաստիան Ռուսաւորանի, ազգային թեմական և ծխական դպրոցների, արքունի զինապետների, համալսարանների և վերջին տարիներումն Սուրբ Աշտիաճնի նորաբաց Գեորգեան ճեմարանի մէջ հայ մանկան բազմութիւնը երաշխաւոր է ազգի զարգացմանը լուսաւորութեան գործին մէջ. մանաւանդ Ռուսաստանի երկու մարաքաղաքների, Մոսկիայի և Վերսալի հայ ուսանողների թիւը, որ համեմատելով Իսթանբուլին տարիների հետ շատ աւելացած է այժմ: Ռուսաւորանալու եռանդը հասցնում է մեր երիտասարդներին Աւրոպիոյ մինչև բարձր ուսումնարանները: Նորա մրցում են ամեն դժուարութեանց դէմ և յաղթելով ծանր արգելքներին վերադառնում են հայրենիք շատ անդամ նուիրելու իւրեանց ազգային գաստարակութեան և զրականութեան փնւմ գործին:



Զ. Հայր իրբև փաճառական Պետութեան և ըն-

կերական զանազան նորաբաց բանկերից և վաճառականութեան նոր կանոններից օգուտ քաղելով ընդարձակում է վաճառականութիւնը իւր բնասուր ձիրքով: Նա երկրէ երկիր, ծով ու ցամաք է դիմում, աշխարհաստանդէսներ է տանում իւր ձեռակերտի և արհեստների մէջ ունեցած տաղանդաւոր գործերը: Ազայ ժամանակ և արդէն մօտ է, որ նա ընկերութիւններ կազմելով արդիւնաւորէ իւր երկրի բերքերը:

Նւ այսպէս Ռուսաստանի հայը վայելելով Պետութեան օրէնքի հովանաւորութեան ներքոյ ազգային, կրօնական և մարդկային ազատութիւն, զարգանում է լուսաւորութեան և ամէն բարեմասնութիւնների մէջ, մանաւանդ Աղէքսանդր Բ. Այստեր քսաննահնգտարեոյ արած բարենորոգութիւնների շնորհիւ: Նա իւր այս խաղաղ և դո՛հ վեճակումը մի միայն վշտով և մտատանջութեամբ է տատապում, աչքի առաջ տեսնելով և լսելով իւր համազգի եղբայրների տազնասյր Օսմանեան երկրումը, մանաւանդ սլաւոնական պատերազմից սկեալ մինչև ցայսօր դա մի օրական ծանր խնդիր է դարձել հայ մարդու համար:

Արդարև Աւրոպայի բարոյական ազատութեան ոգին այս դարու երկրորդ կիսում սկսու մանաւորապէս ներշնչել և Օսմանեան պետութեան մէջ և կարճ ժամանակ չայր՝ նորա ամէն հպատակներից աւելի բարձր դրութեան և բարեբաղդութեան մէջ էր զանուում: Նա՝ պետութեան հպատակների մէջ իբրև միակ զար-

գացեալ տարր, ստացաւ Օսմանեան Պուլթանից սահմանադրական ինքնավարութեան իրաւունք և կանոնադրութիւններ: Այդ վարչութեանը յանձնուեցաւ խնամք տանել շայ ազգի բարոյական, մտաւորական և նիւթական պիտոյից վերայ. անխախտ պահպանել շայստանեոյց եկեղեցւոյ դաւանութիւնը և սուանդութիւնները, ծաւալել և ընդհանրացնել ազգի ամէն դատակարգի երկու սեռի մէջ ուսումն, արհեստ, երկրագործութիւն և ինչ որ նոցա բարգաւաճութեան միջոցներ են համարուում:— պայծառ պահել ազգային հաստատութիւնները և առ հասարակ չինայել ամենայն ջանք և աշխատութիւն ազգի առաջադիմութեան համար: Այս պարտաւորութիւնները ճշտութեամբ կատարելու և օրէնքները ճշտիւ պահել տալու համար Սահմանադրական Ժողովը բացեց Ազգային ընդհանուր Ժողով, Արօնական Ժողով, Ուսումնական Ժողով, Տնտեսական Ժողով, Այլևմտից Խորհրդարան, Վաստատանական Ժողով, Թագական Խորհրդարան և Ազգային Վիճանատուն: Այս ամէն ժողովները և խորհրդարանները ստացան Պուլթանի հաստատութեամբ իւրեանց գործադիր կանոնները:

Սահմանադրութիւնը մի այնպիսի անսովոր երևոյթ էր Օսմանեան Պետութեան մէջ, մանաւանդ այն ժամանակ, որ շայ ազգի ուրախութեանը չափ չկար: Սահմանադրական շայր իւր այդ բարձր դրութիւնից մինչև անգամ Օսմանեան երկրից դուրս բնակող շային թշուառութեան մէջ ընկղմած էր տեսնում: Իսկ

Ռուսաստանի հայր իւր համար երկնաւոր մխիթարութիւն էր համարում, որ Օսմանեան երկրի մէջ բնակող իւր եղբարքը դոնէ ազատուեցան Նալամի օրէնքի ճնշումից և բացուեցաւ նոցա ապագայի համար ապահովութեան, խաղաղ կեանքի, լուսաւորութեան և բարօրութեան ճանապարհ: Վահմանադրութիւնը անցեալ քսան տարիների միջոցում անտարակոյս ոչ սակաւ օգնեց հային առաջադիմութեանը և զարգացմանը, բայց ցաւօք սրտի պէտք է ասել թէ՛ քանի սեւակ հանգամանքներ արգելափակեց իրան շատ զեղեցիկ յոյսերի իրագործուելուն: Վահմանադրութիւնը նպատակ ունեւորվ միայն հայ ազգի օգուտը և զարգացումը, և անսես առնելով նորա դրացի ցեղերը, չկարողացաւ ունենալ այն փառաւոր հեռանկարը, որ Ռուսաստանի բարենորոգութիւնները ունեցան ժողովրդեան համար: — Տարիներ քաշեցին Վահմանադրութեան մի քանի կանոնների անցարմարութեանց փոփոխութիւնը և նոյն իսկ Վահմանադրութեան վերադնուութիւնը պետութեան մի քանի բարձր պաշտոնատարների դաւաճանութեան շնորհիւ: — Օսմանեան պետութեան մանաւանդ շայտասանի այլ և այլ օտար, վայրենաբարոյ ցեղերի անզուսպ կրօնամոլութիւնը և կեղեքիչ բնասիրութիւնը, ևս առաւել վերջին տարիներուն, իբրև պատերազմի հեռանք, համարեալ իսպառ խախտեցին Վահմանադրութեան զործադրութիւնը: Արծես լեռնական Վեզիրը, Չէլքէզը, Աբարափը և Չէչէնը Աովիսի շղթաներից արձակուած

զիմել են Օսմանեան երկիրը շային կեղեքելու և նորա թշուառութիւնները աւելացնելու նպատակաւ: Արծես 1877 և 1878 թուականները առաւել վայրենացրին և կատաղեցրին քուրտերին, իւրեանց դադարեցին վրէժխնդրութեան վերջին միւտը շայի գլխին թափելու: Արծիս Սուլթանի ուժից ընկնելը անօգնական և անպաշտպան հային համար եղաւ. ոչ Վահմանադրութիւնը, ոչ պետութեան խնամքը և հովանաւորութիւնը կարողացան օգնել նորան: Արծես կիսաջուրներ անցեալ պատերազմների մէջ Ռուսիոյ խաչակիր զօրքի առաջ կարողութիւն լինելու և կրած թշուառութեանց վրէժը մի միայն քրիստոնէսայ շայիւրից է հանում: Փոքր-Սսիոյ շայր անհարին աղէտից մէջ ընկզմած — սրոյ, հրոյ, սովի, և մահուան խաղալիկ դարձած. հարստահարութեան, զրկանաց և լլկանաց մասնուած, մասամբ իւր հողեց հալածուած և մասամբ նորա վերայ վերջին ճգնաժամին հասած՝ իւր ազգային մանաւանդ թէ մարդկային իրաւունքը վերականգնելու համար զթութիւն է խնդրում:

Շատ քիչ մխիթարեց նորա Ներլինի վեհաժողովի աւետարեր հրեշտակների բերած յոյսը, որովհետև յոյսը ցայսօր լոկ յոյս մնաց: Շատ քիչ օգնում է նորա թշուառութեանը Պատրիարքի և նորա գործակիցների օր և գիշեր Սուլթանի և դեսպանների դռները զիմելը, արդարութիւն և իրաւունք պահանջելը: Նոցա պատասխանը միայն խոստումն է, որոյ զործադրու-

Թիւնը կամ ոչ երբէք կամ շատ քիչ սրբել է հայի ար-
տասուքը:

Ազգային փառքից կողոպտուած, մարդկային իրա-
ւանքից և ընչից հարստահարուած, ազգութեան վե-
րայից այդ մարմինը մի հզօր բարերարի, փրկաբեր Սա-
մարացւոյ, այցելութեան կարօտ է:

Աղէքսանդր Բ. Ապսեր Թագաւորութեան պատ-
մութիւնը թող գրաւական լինի շայ ազգին, որ այս
Նստուծոյ օրհնեալ Թագաւորը, որի մէջ անձնաւո-
րած է մարդասիրութիւն և կարեկցութիւն, պիտի լսէ
իւր հպատակ շայ ազգի ձայնը և պիտի կենդանացը-
նէ նորա վշտաւն արեւակից եղբայրների յոյսը —
պիտի պահանջէ Օսմանեան Սուլթանից Սան-Սուէ-
Ֆանոյի դաշինքի 16. յօդուածի համաձայն, «շայ աս-
տանի պարտագիր բարենորոգութիւն և
պաշտպանութիւն դրացի ցեղերի բռնու-
թիւնից և հարստահարութիւնից», պիտի
շուսով ձայն սայ Նւրուպային Բերլինի Ահաճողը-
վի 61. յօդուածի խոստացեալ բարենորոգութեանց՝
անյապաղ կատարումը և անմիջական հսկո-
ղութիւնը»:





ԱՂԷՔՍԱՆԴՐ Բ.

Ե

Աղէքսանդր Կայսեր ծնունդը:— Դառանգ ընտրուիլը:—
 Կրթութիւնը:— Ճանապարհորդութիւնները:— Կայ-
 սերական վարչութեան փոխանորդութիւնը:— Ստացած
 պարգևները և ամուսնութիւնը:

ՌՌՍԵՍԻԱՆԻ Կայսր՝ Աղէքսանդր Նիկո-
 ւայե վեջ, ծնաւ Մոսկփա մայրաքաղաքի Կրէմլի Վե-
 կողայեվսկի (փոքր) պալատի մէջ 1818 թ. 17ին ապ-
 րիլի և մկրտուեցաւ Չուդով անուանեալ փանական
 եկեղեցում: Օգոստափառ Հօրեղբայրը՝ Աղէքսանդր Ե,
 որ այն ժամանակ թագաւոր էր Ռուսաստանի, ստա-
 ցաւ նորա ծննդեան աւեալքը իւր ճանապարհորդու-
 թեան ժամանակ Վիշնեվ քաղաքում: Հաճեցաւ նո-
 րաձին մանուկը իւրեան անուանակից անել և ի նշան
 շնորհակարութեան Աստուծոյ, հինք դրեց յիշեալ քա-
 ղաքի մէջ Աղէքսանդր Վեվսկի անունով սամարին:
 Մանկան Հայրն ևս՝ Վիկողայոս Մեծ Իշխանը, նոր
 Երուստղեմի մերձ հիմնեց նոյն սրբոյ անունով ուխ-
 տատեղեցի արուարձանը: Արբ Աղէքսանդր Ե. Կայ-
 սեր մահից յետոյ կայսերական զահը բարձրացաւ ման-
 կան Հայրը՝ Վիկողայոս Ե, եօթնամեայ Աղէքսանդրը
 հրատարակեցաւ թագաժառանգ Ռուսաստանի: Ար-

րա դաստիարակը՝ երևելի բանաստեղծ Ժուկովսկին, հայրենասէր հոգւով կրթեց նորան մինչև 1841 թ. այն ամենայն բարձր և վե՛ստ գիտութեամբ որ անհրաժեշտ էր մանկան ապագայ կայսերական կոչման համար: Ժուկովսկուն գործակից էին և այլ գիտնական անձինք որոնք կրթումէին Օգոստափառ մանուկը նորա սուաջնորդած ուղղութեամբ: Վաստական կրթութեան հետ պակաս էր և գործնականը. այսպէս 1837 թ. անդի ունեցաւ Նորա ճանապարհորդութիւնը Եւրոպական Ռուսաստանի ներքին և հարսւային նահանգներում: Նա առաջինն եղաւ կայսերական սոհմից Վիբրիա ճանապարհորդողը. այս այնպիսի մի տարօրինակ երևոյթ էր որ այդ ստուանանեաց ծոցը բնակող ժողովուրդը ասացին. «Մինչև այսօր մեր երկիրը լոկ Վիբրիա էր անուանուում, այսուհետև եղաւ Ռուսաստան: Նա այս ճանապարհորդութեան ժամանակ նուրբ հետազոտում էր Ռուսաստանի երկրի նշանաւոր յարմարութիւնները. այցելում էր գործարաններին, արհեստանոցներին, մանաւանդ իւր ուշադրութիւնը դարձնում էր Վիբրիայի մետաղական և հանքային հարստութեան վերայ և շատ հարցեր էր յարուցանում տեղական բերքերի արհեստական գործադրութեան և արդիւնաւոր վաճառաշահութեան մասին: Նա կարեկցարար հետաքրքիր էր Վիբրիայի պտորական դասին, որոնց համար խնդրեց իւր Օգոստափառ շօր գթութիւնը — նոցա պատժական վճիռները մեղմացներու և արտորանքի ժամանակը կարճեցնելու:

Երբ Նա այս 10,000 վերստի չափ ճանապարհորդութիւնից վերադարձաւ Մոսկվա, հանդուցեալ Մեա-

րասօրեա Ֆիլարէտը Արէմիլ Վերափոխման մայր եկեղեցւոյ դասը դիմաւորեց Նորին Բարձրութեան այս նշանաւոր խօսքերով. «Ամենաբարեպաշտ Թագաւոր, Պայծառ է միշտ մեղ համար Վո գալուստը ինչպէս Ռուսաստանի արեգական արշաղոյսը, բայց այս անգամ նոր երևոյթ, նոր խորհուրդ և նոր զբացմանք. առանձին բերկրութեամբ ընդ առաջ ենք երանում Վո հեռաւոր ճանապարհորդութիւնից վերադարձին, որովհետև մեր սրտերը տրոփելով ուղեկից էին Վո կանխահաս, հեռաւոր և արագ թռուցին»: Յետոյ յաւելացնում է Մեարապօլիար. թէ «Վո հեռատես խնամակալ շայրը այս ճանապարհորդութեան միջոցով Ռուսաստանը դարձրեց Վեկ համար ուսումնասիրութեան տաճար»:

Թագաժառանգ Աղէքսանդրը երկու ամբողջ տարի 1833 և 1839 թ. ճանապարհորդեց Եւրոպայի բոլոր երկիրները և ծանօթացաւ նոցա վարչութեան հետ: Նա գնաց այցելութեան շորանդիայի այն տեղը, ուր Մեծն Պետրոս իբրև ստեփական նաւաստի, զենջակը կապած սփորումէր նաւ շինելու արհեստը: Նա այդ ճանապարհորդութեան ժամանակ, շեսէն Վարմշտատի մէջ ընտրեց հարսնութեան Աւգովիկոս Բ շերտովի դուստրը՝ Մարիա Վքսուհին, որի հետ ամուսնացաւ Պետերբուրգում 1841 թ.:

Երբ՝ 1845 թ. Նիկողայոս Պայսը ճանապարհորդակից եղաւ արտասահման Օգոստափառ Մարիա Ֆեօդորովնա Ամուսոյն, իւր արքայական վե՛ստ խնամատարութիւնը Ռուսաստանի վերայ, յանձնեց թագաժառանգ Աղէքսանդր Մեծ Իշխանին: Վերադար-

ձին՝ տեսնելով՝ Նորին Ապսերական Բարձրութեան
 Հանձարաւոր կառավարութիւնը, պարզեց Նորան
 սրբոյն Ալլաղիմիրի Ա աստիճանի ասպետական շքա-
 նշանը: Հրովարտակի մէջ գրուած էին այս վեմ խօս-
 քերը:

»Ալլաղառնարով այժմ՝ Աստուծոյ օրհնութեամբ
 հասու եղայ Նս, որ Իմ յոյս պատկուած է ի միութա-
 րութիւն Իմ Հայրական քնքոյշ սրտի սիրոյ որ ունիմ
 դէպի Ձեզ: Ապացոյց Իմ գոհունակութեան պարզե-
 ում եմ Ձեզ ասպետութիւն առաքելապատիւ մեծ իշ-
 խան Ալլաղիմիրի Ա աստիճանի, որոյ նշանադիրն է. —

»Օգուտ, Պատիւ և Փառք»: Այդ իսկ խօսքերը պիտի
 լինին Ձեր նշանաբանը և զորս համար իսկ Բարձրեա-
 լի նախախնամութիւնը վիճակել է Ձեզ Ռուսաստանի
 գահի ժառանգութիւնը:

Թագաժառանգ Աղէքսանդրը 1850 թ. ճանապար-
 հորդեց անդրկովկասեան երկիրները, ուր այց ելանե-
 լով ամենայն քաղաքներին, ստացաւ մերձաւոր ծանօ-
 թութիւն տեղական ժողովուրդոց, երկրի դրութեանը և
 այլ և այլ հանգամանքներին: Ալլաղարձին՝ պատա-
 հելով լեռնական լեզգիների Ռուսաց վերայ արած ար-
 շաւանքին, աներկիւղ առաջ խողաց թշնամեաց վե-
 րայ, սլանարով զօրայ առաջ և կեանքը վտանգի մէջ
 դնելով յաղթանակեց թշնամուն: Այս քաջութեան
 պատկն եղաւ Իւր Օգոստափառ Հօր պարգևած սուրբ
 Վեորգի ասպետական շքանշանը:

Բ.

Ռուսաստանի անցեալը: — Աւաստօպօլի պատերազմը: —
 Նիկողայոս Ապսեր մահը: — Աղէքսանդր Բ գահակա-
 րութիւնը: — Նորա նորանոր բարեկարգութիւնները: —
 Աւաստօպօլի անկումը: — Խաղաղութեան դաշինքը: —
 Թագադրութեան ժամագրութիւնը:

ՄԻՆՁՆԻ ԺԷ: Դարը Ռուսաստանը իւր դարա-
 ւոր անկախութիւնը պահպանեց ներքին և զրացի Մօն-
 զօրական ցեղերի թշնամական յարձակմունքներից և
 շատ մասնաւոր էր նորա հաղորդակցութիւնը Աւրո-
 պական տէրութիւնների հետ: Եւս դարեր Ռուսաս-
 տանը զինարկեց հարաւային թշնամիներին, Օսմա-
 նեանց, Աովկասեան լեռնական ցեղերին, հիւսիսարեակ
 Եվէզին, Աեհին և Վեմցէին: Նս ահեղ զօրու-
 թեամբ յաղթանակեց այն ամենայն դժուարութիւն-
 ներին, որոնք խափանում էին նորա յառաջադիմու-
 թեանը: Ժէ դարից սկսած Ռուսաստանը առաւել
 զօրացաւ Պետրոս Ա, Ակատարինէ Բ, Աղէքսանդր Ա
 և Նիկողայոս Ա Ապսերութեան օրերը: Աւրոպայի նա-
 խանձր Ռուսաստանի համար յղացաւ մի խորհուրդ —
 պատերազմական դաշնակցութիւն Ռուսաստանի դէմ

և ծնաւ Աւաստայօրի արիւնահեղ պատերազմը: Այս թշնամեան դաշինքի առաջին գործադիրն եղաւ Օսմանեան Սուլթանը՝ հրատարակելով հաւատոյ պատերազմ 1853 թ. 24 սեպտեմբերի և ապա նորա հետ միացան Անգլիան, Վաղղիան և Վարդինիան մահմետականութիւնը պաշտպանելու համար: Մնացեալ բոլոր Աւրոպական տէրութիւնները հանդիսատես մնացին չէզոք և լուրջ դրութեամբ: Ռուսաստանը ճակատեցաւ այդ մեծագոր դաշնակից թշնամեաց դէմ և մի և նոյն ժամանակ քանի հազար վերստ տարածութեամբ ընդարձակ սահմանները զինուորներով և զէնքով պարսպապատեց: Ամբողջ 11 ամիս Աւաստայօրի առաջ սեաւ ծովը կարմիր դոյն փոխուեցաւ երկու կողմերի զօրքերի արիւնով: Ռուսաստանի այս իսկ ամենաճանր ձգնաժամին՝ 19 փետրուարի 1855 թ. Վիկտորյոս Այսրը թողեց Աղէքսանդրին իւր արիւնածուփ ակօռը: Աղէքսանդր Բ գահակալութեան առաջին օրը ամենողորմած հրովարտակով թեթեւցրեց իւր հպատակների դրութիւնը: Մի և նոյն ժամանակ նա մեծ փոյթ տարաւ զինուորական ոյժը աւերացնելու հրաւիրելով ընդհանուր ժողովուրդը զէնք առնել (ополчение). թշնամին իւր զօրութիւնը կեդրոնացրեց Աւաստայօրի վերայ, այդ իսկ ժամանակ օգնութեան կոչելով Վարդինիային, և իւր իսկ զինուորական զօրութիւնը կրկնապատկելով: Աւ այսպէս Ռուսաստանի քաջայայլթ զօրքերին մնաց անընկճելի զօրութեամբ դիմադրել չորս հզօր տէրութիւնների շատ կանուխ ժամանակով պատրաստուած, վիթխարի զօրութեանը: Աղէքսանդր Այսրը՝ տեսնելով թշնամու

անընկճելի կամակորութիւնը և խնայելով իւր քաջայայլթ զօրքի անօգուտ նահատակութիւնը, վճուեց դատարկել Աւաստայօրի կիսաւեր ամրոյնները:

Արեք տարւոյ անօրինակ պատերազմը հարկաւ նաև նիւթական մեծ կորուստ պատճառեց Ռուսաստանին՝ բացի պատերազմական ծախքերից աււարական գործերի դադարելովը: Փարիզեան խաղաղական դաշնագիրը 18 մարտի 1856 թ. վերջ դրեց երկու կողմերի սպրտախելի կորստեանը և մէկ ամսից յետոյ Ապսերական հրովարտակով նշանակուեցաւ թագադրութեան ժամադրութիւնը 26 օգոստոսի նոյն 1856 թ.:

Գ.

Մեծքսանդրի թագադրութիւնը: — Նորա հրովարտակր: — Մատ ողորմութիւնները: — Օխնուորների որդւոց ազատութիւնը: — Արթութիւնը: — Քաղաքական վիճակը: — Մեծքսանդրի «Մատարար» կոչումը: — Նորա մարդասիրութիւնը: — Օխնուորների գաղթականութեան օրէնքի ջնջուիլը: — «Օխնուոր» բառի նշանակութիւնը: — Մ.Ս. և այլ զինուորական բարենորոգութիւններ:

ՕԳՈՍՏԵՓԵՈՒ Մեծքսանդր Բ և Նորա Օգոստոսիաւ ամուսնոյ՝ Մարիա Մեծքսանդրովնայի թագադրութեան: ամենափառաւոր հանդիսի հետ վայելեց Ռուսաստանը թագապսակ Այսեր մեծ ողորմութիւնը և իմաստուն կարգադրութիւնները: Նորա Այսերական ամենողորմած հրովարտակր լի էր այնպիսի գերադոյն մարդասիրութեամբ, որ հիմն եղաւ նորա ազագայ վարչութեան բարեկարգ կարգադրութիւններին և որով ցայսօր շատ բարեբաղդութիւն է վայելում Ռուսաստանը: Հրովարտակով Այսորը պարգեւեց իւր բազմաչարչար զինուորներին ժամանակաւոր հանգիստ և զանազան օժանդակութիւններ, Արիւրական արտրականներին և յանցաւորներին պատժի թեթեւութիւն և ազատութիւն նոցա, որոնք խոր սրտից յայտնում էին զղջում և ապաշաւ, արժանագով ծառայողներին վարձատրութիւն և ընդհանրապէս բոլոր չպատակներին կարեւոր առանձնաշնորհութիւններ,

որոնց մի աւ մի թուելը կարօտ է շատ թերթերի: Օխնուորների որդիքը ազատուեցան այն պարտաւորութիւնից որ մինչև այդ ժամանակ մշանջնական ժառանգական պարտք էր դրոշմած նոցա ճակատի վերայ նոքա ստացան ժողովրդական իրաւունք: «Մատել զինուորների որդւոց պետութեան մշանջնական ծառայութիւնից» հրամայում էր Այսորը իւր հրովարտակի մէջ. «տայ նոցա արքունուստ սնունդ, բանալ զինուորական դպրոցներ նոցա համար և ընդունել նոցա այնտեղ ոչ պարտաւորեալ այլ ազատ կամքով:» Աւ այսպէս նոքա՝ ժողովրդական շրջանի մէջ ընտրելով ազատ աշխատութեան ճանապարհ, առաւել պիտանի անդամ դարձան հայրենիքի և զինուոր հարց վաստակակից, ստանալով դաստիարակութիւն Այսերական առատ ողորմութեամբ ձրիավարժ դպրոցների մէջ: Մեծքսանդր Բ այդ օրից «Մատարար» անունը ստացաւ: Մ.Ս էր ահա Օգոստոսիաւ Մեծքսանդր Բ Այսեր գահակալութեան երկու աւուրց ամենայն ինդրադործերի պատասխանը. «Մ.Ս ինչ վճիւր փոխել», «Մորան ներել», «Մ.քսորուածին դարձնել», «Օրկեալն ողորմել», «Մեթանապէս վարձատրել»:

Մեծքսանների, վերաւորեալների, կարօսների, յանցաւորների ողորմութեան դուռն էր Նորա օժութեան հանդիսի օրերը. իսկ ազագայ բարեկարգութիւնները, ստրուկների ազատութիւնը, իրաւունքների հաւասարութիւնը, օրէնքի պաշտպանութիւնը, հպատակների անդորրութիւնը և ընդհանրապէս Ռուսաստանի բարօրութեան փառքը՝ արշալուսի նման, արտափայլած էին Այսեր երեսի վերայ:

Հետևեալ տարին այն է 1857 թ. Այսպէս հաճեցաւ իւր ազգասիրութեան մի նոր ապացոյց հրատարակել՝ ջնջելով զինուորների գաղթականութեան (поселение) օրէնքը, որ Աղէքսանդր Ա. Այսպէս սահմանել էր ժողովրդեան զինուոր տալու պարտաւորութիւնը թեթեւացնելու համար: Այս կարգադրութեամբ մինչև այդ ժամանակ 600 հազարի չափ զիւղացիք պարտաւոր էին երկրագործութեամբ մի քանի գաւառների մէջ նշանակած հողերի վերայ (КОЛОНИЯ). նոցա վերայ հսկում էր զինուորական անսչութիւնը և նոցա պարտաւոր էին զինուորականութեան շարքը անցնել: Աղէքսանդր Բ.՝ իւր բնատուր հանձնարով հասկացաւ որ նոցա ժողովրդականութիւնից բաժանուով և երկու հակասական պարտաւորութիւններ կատարելը կաշկանդել է նոցա յետագիծութեան մէջ: Աւստի Այսսերական հրովարտակով քանդեց այդ հանգոյցը և՛ հաւասար այլ զիւղաբնակ երկրագործներին, պարզեւեց նոցա ազատութիւն և իրաւունք: Մէկ միլիոնի չափ օտարութիւն անձինք ժողովրդականութիւն ստացան: Դողդիւրը Ռուսաստանի մէջ «զինուոր» (СОЛДАТЪ) կոչմանը արհամարհանքով էր նայում, պատճառը շատ իրաւացի էր. եղեռնագործ, չարագործ, գող, աւազակ, վառիժար, անհնազանդ մարդկանցից շատերին դատաստանը վճռում էր զրկել քաղաքական իրաւունքներից և տալ զինուոր: Հայրը իւր անառակ որդուն զինուոր էր տալիս, անլուսականը իւր անպիտան և անպուսպ սրտուկը պատժում էր՝ զինուորութեան դատապարտելով: Այլ է տեսլութեան զինուորականութեան մէջ կային բարեխիղճ երկիւղած մարդիկ թէպէտ ընդհան-

րապէս ազէտ, այնու ամենայնիւ ամօթ էին համարում կանգնել մէկ շարքում եղեռնագործների հետ և այդ ծանր անարգանքը տանում էին պարտաւորեալ զինուորական օրէնքի խիստ պահանջմունքներին: Աղէքսանդր Բ. Այսսերական հրովարտակով 1859 թ. ոչ միայն ջնջեց այդ օրէնքը, որ այնուհետև մարդկութեան մէջ անպիտանացածները զինուորութեան չ'գատապարտուին, այլ և հրամայեց որ նոյն խիղ զինուորների մէջ յայնուհետ չարագործները և ծոյրը արտաքսուին և ենթարկուին ծանր աշխատանքների և դոցա համար կազմուեցաւ առանձին զինուորական խումբ (арестантскія роты):

Այս նոր հրովարտակի շնորհիւ «զինուոր» բառը ստացաւ իւր բուն նշանակութեան արժանաւորութիւնը. այնուհետև Այսսերական գահի ամենաբարձր պաշտօնեան, բազմադիւն զօրապետը փառք էին համարում վերջին զինուորի հաւասար կրել այդ կոչումը իբրև պաշտպան հայրենեաց: Համարեա գահակալութեան օրից Աղէքսանդր Բ. սկսաւ իւր ուշադրութիւնը դարձնել զինուորական բարենորոգութեան վերայ. այդ օրից սկսվում են ընդարձակ կարգադրութիւններ ցամաքային և ծովային զօրութեան վերաբերմամբ: Այն տարւոյ վերջը կանաճիստները ազատվում են զինուորական ծառայութիւնից: Արեք տարուց յետոյ զինուորների 25 ամենայ ծառայութեան ժամանակը Այսպէս պակասացրեց: Չ'խնուորների զգեստների ձևը փոխուեցաւ առողջապահութեան և անզական կլիմաների պահանջմունքներին համեմատ:

Դ.

Ստրուկների ազատութեան խնդիրը — Այս առիթով սահմանուած ժողովքները: — Ազատութեան հրովարտակը: — Մոյց անտեսական բարօրութեան քաղաքականութեան և կրթութեան կանոնադրութիւնները:

ԱՂԱՅԻՍԵՆԿՈՒՄ Ե իւր գահակալութեան հինգերորդ տարեգարձին՝ 19ին փետրուարի 1861 թ., հրատարակեց 22 միլիոն ստրուկների ազատութիւնը այդ օրը լայնածաւալ Ռուսաստանի ամենապայծառ և փառաւոր օրն էր ներկայ դարու մէջ: Անյիշատակ դարերի բռնակալութեան ամենամեծ հետեւեքը մնացել էր Ռուսաստանի մէջ այդ էր ստրկութիւնը: Հաւանական է որ թէև ստրկութիւնը սկսուած լինէր բռնակալութեամբ հին դարերի մարդկութեան թրշուտ վիճակի մէջ, այնու ամենայնիւ նա ունեցել էր և իւր օգտակար կողմը: Ստրուկը՝ թէպէտ սեպհակալութեան և մարդկութեան իրաւունքից ըստ մեծի մասին զրկուած էր, բայց զոնէ ապահով էր որ՝ պատկանելով մի իշխանի, չպիտի համներ թշուառութեան այն ծայրայեղութեան, որ մի օր քաղցածութիւնից մե-


ռանիր, և կամ գերի գնար այլ բռնաւորի ձեռք, բայց այդ՝ մարդկութեան ամենաստոր իրաւունքից անգամ ստոր էր: Ժէ դարու Ռուսաց ինքնակալները զբացին այդ և սոցա՝ չ՝սակմ աղատութեան՝ այլ վիճակի բարելաւութեան խորհուրդներով զբաղեցան, բայց Ադէրսանդր Բ. իւր գահակալութեան ուխտի ամենանշանաւորը համարեց նոցա ազատութեան գործը: Աս՝ 1857 թ. յունուարի 3ին, սահմանեց ժողովք իւր իսկ նախագահութեամբ և հրամայեց զաւտական ազնուականների գլխաւորներին ստրկատէր այնուականներին ժողովք կազմել, պարապել ստրուկների վիճակը բարեղրութեամբ հարցով և իւրեանց վճիռները յանձնել նահանգական այնուսպետական ժողովներին, որոնք նոցա վճիռները իւրեանց կարծիքների հետ միասին պէտք է հասցնէին Ասցսերական ժողովին: Բայց 1860 թ. Ասցսեր նախագահութեամբ կազմուած ժողովք վերադնելով ամենայն տեղերից հասցրած գործերը և վճիռները, որոշեց այնուհետև պարապել ստրկութիւնը ջնջելու հարցով, այնպէս որ նոքա ազատութեան հետ ստանան մշակելու համար դեպի և հողատէրերը վարձատրուին դրամով:

Ռուսաստանի Ազատարար Ասցսրը վերջապէս ամենողորմած հրովարտակով այդ նշանաւոր 19 փետրուարի օրը ջնջեց ստրկատիրական իրաւունքը (кредитное право). այդ հրովարտակի մէջ կային այս խօսքերը. «Ստրուկները պիտի ստանան զէպ ժամանակին՝ ազատ զիւղականներին հաւասար իրաւունք. հողատէրերը անկորուստ պահպանելով սեպհականութեան իրաւունքը պարտաւորին տալ ստրուկներին բնակարան

և վարերաՏող սարուկները ժամանակաւորապէս ծառայելու պարտաւորութեամբ սեպհականացիներն այն կամ գնէն և ապա իսպառ ազատ լինին պարտակաւորութիւնից՝: Առանձին օրէիք սահմանեցաւ և ընդօժին մարդկանց համար (ДВОРОВЫЕ ЛЮДИ) որ երկու տարուայ ժամանակամիջոցումը ստանան կատարեալ ազատութիւն: Սարուկների ազատութեան գործը կարգաւորելու համար հաստատուեցան նահանգական ատենաներ, իսկ զոցա և հողատերերի մէջ ծագած վէճերը վճռելու համար նշանակուեցան խաղաղարար միջնորդներ (мировые посредники): Ազատարար Ապսրը իւր հրովարտակի մէջ բացատրելով այս վեճի գործի ամենատեսակ կարգադրութիւնները— վերջացնում էր այն, այս խօսքերով. « Աւղղափառ ժողովուրդ, խաչն նշանը կնիք դիր քո անձին և Աստուծոյ օրհնութիւնը մտղթիր քո ազատ աշխատանքի համար՝ իբրև առհասառչեայ քո ընտանեկան բարեկեցութեան և հասարակաց բարօրութեան»: Աւ այսպէս սարուկները ստացան ազատ զիւղականի իրաւունք. նոքա ազատ եղան ամուսնանալ առանց զիւղափրոջ հրամանի, ոչինչ պատժի չպիտի ենթարկուէին առանց դատասանի և իշխանութեան վճռի: Աոցա որդւոց համար բաց էին այնուհետև ընդհանուր դպրոցների դռները, նոքա կարող էին ամենայն պաշածոնների մէջ իւրեանց ուսման համեմատ անդ ստանալ մանուսանդ ուսում նարանների և երկրաչափական վարժարանների մէջ: Աոքա ստացան իրաւունք պարապել առւարական գործերով, բանալ զործարաններ և արհեստանոցներ, բաց ի այդ բոլոր կարգադրութիւններից որոշուեցաւ նո-

ցա զետին բաժանելու և հարկի ազատութեան ժամանակակէտը:

Ուստատանը յաւիտեան չէ մուսնալու իւր Ազատարարի այդ յաւերժայիշատակ գործը և իւր նշանաբանը պիտի լինի Ապսրական այն խօսքը թէ «Ազատ աշխատանքի համար պէտք է օգնութեան խնդրել Աստուծոյ օրհնութիւնը և այն է միայն ընտանեկան և հասարակական բարօրութեան գրաւականը»:



6238

Ե.

Առաջին տնտեսական վարչութեան անյարմարութիւնները: — Նոր գիւղատնտեսական ինքնավարութիւնը: — Նորա օգուտները: — Վանոնները: — Բաղաքական տնտեսական ինքնավարութիւնը:

ԱՐՅԱՆՔԻՆՆԵՐ Տրոխարտակով յունուարի 1ին 1864 թ. սահմանուեցաւ գիւղատնտեսական օրէնքը (земское учреждение), որով շատ չարագործութիւններ արմատախիլ եղան, որովհետեւ ժողովուրդը իւր դրամական միջոցներով քաղաքների, գիւղերի և ճանապարհների շինութեան և պահպանութեան գործը վարձկանների և անփորձ պաշտօնեաների ձեռքից իւր իրաւունքի տակ առաւ: Առաջուայ կառավարչական ձեւը շատ մեծամեծ անյարմարութիւնների հետ աներևակայելի դժուարութիւններ ունէր և ժամանակի կորուստ էր պատճառում: Օրինակ, եթէ ժողովուրդը անհրաժեշտ էր համարում նորոգել գիւղի կամ քաղաքի եկեղեցին, ճանապարհները խճուղի շինել, կամուրջ շինել, դպրոցներ հիմնել, նոցա բարեկարգութեան միջոցները աւելացնել, աղքատանոց կամ մի այլ բարեգործական հիմնարկութիւն հաստատել պարտաւոր էր խնդիր տալ, վճիռ ստանալ: Այլ ահա սկը-

տուում էր մի անվերջ գրագրութիւն, որի ծայրը շատ անգամ հասնում էր մինչև Պետերբուրգ, մինչդեռ մի և նոյն ժամանակ քայքայվում էր եկեղեցին և ժողովուրդը զրկվում էր իւր կրօնական պարաքը կատարելուց, որովհետեւ ոստիկանութեան կարգադրութեամբ եկեղեցւոյ դռները փակվում էին, քանդուում էր հին կամուրջը և արգելադրութիւն էր լինում ժողովրդեան ուղղակի ճանապարհի հաղորդակցութեամբ բերքը վաճառելու և իւր պիտոյքը հոգարու. և այլ այսպիսի շատ անյարմարութիւնների հանդիպելով խափանվում էին շատ պիտանի և կարևոր խորհուրդներ և գործեր:

Ահա թէ ի՞նչ մեծ արդիւնաւորութիւն ունեցաւ Օգոստափառ Մայսեր հաստատած գիւղատնտեսական կառավարութեան նոր օրէնքը: Վիւղատնտեսական օրէնքը իրաւունք տուեց իւրաքանչիւր քաղաքի և գիւղի հասարակութեան, սահմանուած կանոններով իւր ներկայացուցիչների ընտրութեամբ նշանակել այդ անսչութեան համար յուսալի պաշտօնեաներ նոյն իսկ ժողովուրդից, հաւատարմօր նոցա կալուածների անսչութիւնը, դրամադրուխների պահպանութիւնը և շահեցողութիւնը, հարկահանութիւնը, նոր շինուածների կանգնելը, գիւղատնտեսական վարչութեան ծախքը, ճանապարհների շինութիւնը, ժողովրդեան կենսական ապահովութիւնը, եկեղեցիների շինութիւնը և հոգաբարձութիւնը, դպրոցների և բարեգործական հաստատութիւնների խնամատարութիւնը, կալուածների ապահովութիւնը (застрахование), վաճառականութեան և արհեստի նմանապէս և այլ արդիւնաւորութիւնների բարգաւաճութիւնը, ժողովրդեան շահերի նորանոր

աղբիւրներ աւելացնելը և նոցա բարոյական զարգացման միջոցներ հոգալը — այս ամենը ընդարձակել որչափ ժողովրդեան ոյժը և միջոցները թոյլ են տալիս: Գիւղատնտեսական ինքնավարութեան օրէնքը տուեց ժողովրդեան այնպիսի անկախութիւն, որ նա ինքն ազատօրէն ջանադիր եղաւ բարւոքել իւր վիճակը, ամենայն հնարք գործ դնել հայրենեաց հարստութեան և բարեւաւութեան համար, և սա ի՞նչ տուեց աշխատասիրութեան:

Իսկ 1870 թ. սահմանուեցաւ քաղաքական օրէնք քաղաքների ինքնավարութեան, որով քաղաքական արնտեսութիւնը յանձնեցաւ ինքեան քաղաքացուն:

Օ:

Այսերական հրովարտակը հրապարակական բերանացի դատաստանի համար: — Ստորին, միջին և բարձր դատարաններ: — Գատաստանի կանոնները: — Գատասպարտակի արդարութեան միջոցները: — Պատիժների թեթևութիւնը: — Պատժապարտական օրէնքը: — Բանտերի բարեկարգութիւնը: — Բանտարկեալների ազահոյութիւնը: Պարտապահանջութեան նոր կանոնները:

«ԵՐԿՐՈՒԹԻՒՆ և ողորմութիւն թոյլ թագաւորէ դատաստանների մէջ» — Ե. յս էին ահա Աղէքսանդր Բ Այսեր 19 մարտի 1856 թ. հրատարակած հրովարտակի խօսքերը: «Բարձրեպի նախախնամութեան օգնութեամբ, որ միշտ բարերարում է Ռուսաստանին, թոյլ հաստատուի և կատարելագործուի նորաներքին բարեկարգութիւնը, թոյլ ամենայն տեղ տարածուի նոր ուժով ձգտումն զէպի ամենայն մի օգտակար գործունէութիւն, և ամենայն մի անհատ՝ օրէնքի միահաւասար պաշտպանութեան և հովանաւորութեան ներքոյ, թոյլ փայելէ այս աշխարհումը իւր անմեղ աշխատանքի պտուղը: Ա յերջապէս այս է Մեր առաջին բաղձանքը — հաւատոյ փրկարար լոյսը, լուսաւորելով մարդկային մտքերը և ամբացնելով սրտերը, առաւել ևս թոյլ պահպանէ և բարւոքէ հատարակու-

թեան բարոյականութիւնը, որ է իսկական գրաւական բարեկարգութեան և երջանկութեան”:

Այդպէս էր Աորա ուխտը և Իւր թագադրութեան օրը՝ 26ին օգոստոսի 1856 թ. — Ահա Աորա խօսքերը. «Մենք ժառանգեցինք մեր նախնեաց պատիր: Մեր մշտական խորհուրդն էր, ինչպէս և միշտ պիտի լինի մեր սիրելի հայրենեաց բարօրութիւնը: Թագադրութեան ներկայ հանդիսակատարութեան մէջ կրկնում ենք Մեր ուխտը, որ սուել էինք Մեր նախնեաց գահը բարձրացած օրը — միշտ մի ուղղութիւն ունենալ և հետեւելով այդ ուղղութեան, բարձրացնել մեր աշխարհի բարօրութիւնը այժմ և ապագայում”:

Այդ աննուանալի Ապսերական վեմ խօսքերը քսան և հինգ տարուայ շրջանում պարզեցին Ռուսաստանին նոր ոյժ և նոր կեանք:

Սարուկներին ազատութիւն պարգևելուց յետոյ, անտեսական և քաղաքական օրէնքները հրատարակելուց յետոյ, հասաւ ժամանակ Վատաստանական նոր բարենորոգութիւնների: Արբ սարուկներին պարգևեցաւ գիւղացու և քաղաքացու հաւասար իրաւունք, երբ ժողովուրդեան շնորհեցաւ վարչական գործադիր պաշտօնեաների ընտրութեան արտօնութիւն, հին գատաստանական կանոնադրութիւնները անյարմար երևեցան նոր օրէնքի առաջ և անհրաժեշտ եղաւ հիմնովին փոփոխել գատաստանական օրէնքը և սահմանել նորը: Այնուհետև Օգոստափառ Ապսեր կամքն էր առաջին խիստ, ծանրաբայլ գատաստանական ձևը և նորա անյարմար և ըստ մեծի մասին կողմնապահական և մնայլ ընթացքը փոխարկել այնպէս, որ նորանում փայլէր

միայն արդարութիւն և ողորմութիւն, որ արագաբայլ ընթացքով հրապարակաւ վճռուէր ամենայն դատ և նոր օրէնքին առաջ բոլոր հպատակները հաւասարապէս պարտաւորուէին: 20 սեպտեմբերի 1864 թ. հրատարակեցաւ նոր գատաստանական օրէնք, բոլորովին նոր սկզբունքների վերայ հիմնած. միայն նորանում պահուեցաւ գատաստանական քննիչների (судебные следователи) վերաբերեալ օրէնքը, որ արդէն հաստատուած էր յունիսի 8ին 1860 թ.: Վատաստանական պաշտօնեաները ընտրվում են այնպիսի անձներից, որոնք աւարտել են ուսման ընթացքը համալսարանի իրաւաբանական և մանաւարապէս այլ բաժինների մէջ և շատ տարի բաղմափորձ պաշտօններում յառաջադէմ և արդիւնաւոր են եղած պետութեան և հաշարակական գործերում: Թեթե դատերը և յանցաւորների մինչև երեքամեայ բանտարկելութեան իրաւունքը, առանձին օրէնքի հաստատութեամբ, յանձնուեցաւ հաշարար գատաւորներին և նոցա ժողովքին (мировые судьи и ихъ съѣзды). իսկ քաղաքական և քրեական դատերի համար նահանգական քաղաքներում հետոհետէ բացուեցան Վահանգական Վատարաններ, որոնց մէջ վճիռ են ստանում հաշարար գատաւորների իրաւունքից բարձր գործերը: Վահանգական Վատարանների վճիռներից անբաւական մնացողների համար բացուեցան Վատաստանական Պալատներ (судебныя палаты) և նոցանից բարձր — Վճռաջինջ Ժողով Վաւալարիչ Սենատի մէջ (кассационныя департаменты Правительствующаго Сената), որի նշանակութիւնն է հսկել արդարութեան և վճ-

ուել թէ քաղաքական և թէ քրէական դատերի բողոքները, իբրև Այստերական Բարձրագոյն Վատարան: Ամենայն դասի վերազինութիւնը և վճիռը, մասնաւոր բացառութեամբ, լինում է բերանացի և հրատարակական: Վատ բացողը և պատասխանատուն կամ անձամբ կամ իւրեանց մտերմատարի միջոցով վարում են իւրեանց դատը: Մտերմատարը կարող է լինել մի երդուեալ փաստարան, (присяжный повѣренный) անպատճառ իրաւաբան — կամ մի անձն մասնաւոր, իսկ քննութեան ենթարկուած յանցաւորների իրաւունքը կարող է պաշտպանել կամ ինքեան յանցաւորին ընտրած անձնը և կամ դատարանից նշանակուածը: Վաղաքական դատերի մէջ՝ որոնք հիմնուում են գրաւոր փաստերի վերայ, թողլատրվում է բերանացի բացատրութիւններ: Վրէական գործերը վճռելու ժաւանակ, բացի ներկայացրած ապացոյցներից, սահմանուած է, որ հաշտարար դատաւորները պարզեն ճշմարտութիւնը իւրեանց ներքին համոզմունքով, իսկ նահանգական Վատարաններում՝ այդպիսի գործերը վճռուում են տասներկու երդուեալ դատողակից անձների որոշումով (присяжные засѣдатели), և այս վերջինները ընտրվում են օրէնքի սահմանուած կարգով ամենայն դասակարգի ժողովրդից: Այդ անձինք հասարակութեան խղճի և համոզմունքի ներկայացուցիչներն են, նորալուծ, դատում և ընտրում են դատաստանի մէջ բացարձակ և վկայած գործի հանգամանքը, վկաներու խօսքերը, դատապարտեալի պաշտպանութիւնը, պրօկուրօրի (прокуроръ) օրինական դատապարտելը, օրէնքի տուած հաստատութիւնը, երկու կողմերի հարցերը

և պատասխանները, և ապա իւրեանց ներքին համոզմունքով պատասխանում են դատարանի երկու կանոնաւոր հարցերին — ա. Յանցաւոր է թէ ոչ, բ. Այժմ յանցաւոր է արժանի՞ է զեջողութեան: Նոցա յանցաւոր ճանաչուած անձին պատիժը կարող է թեթեւցանել կամ բողոքովին ներել մի միայն Թագաւոր Այսօր:

Այսօրինակ դատաստանական սահմանադրութեան մէջ յանցաւորը դատում է պաշտպանութիւն և միջոց իւր անձնը արդարացնելու նախ՝ ժողովրդեան խղճին համոզմունքով և երկրորդ՝ իւր բողոքը հասցնելով աւելի բարձր սեղ, որ ստորին և միջին դատաստանատեղերի զանցառութիւնները և սխալանքը բացատրելով, պարզում է ճշմարտութիւնը: Այս կարգով կատարուեցաւ Այսթուհի՝ Ակատարինէի Բ խօսքը. «Աւա է արդարացնել տասն յանցաւոր, քան դատապարտել մի անմեղ մարդ»:

Այսպիսի հանձնարաւոր ընթացքով միանգամայն ճանաչուում և որոշուում է իսկական չարագործ և անբարոյական անձնը պատահական, հոգեկան հիւանդ, թուլամիտ և հանգամանքից ստիպուած սխալական յանցաւորներից: Վաղով պատժապարտական օրէնքին, պէտք է ասել, որ այժմեան Այստերական օրէնքը առաւել մարդասիրութեան և կարեկցութեան միջոցներ է, քան թէ պատիժ: Մարմնաւոր պատիժները — ծեծը, դատախնիքը, արգէն 1863 թ. վերջացած են: Բանտերը որոշուած են զանազան բաժանումներով: այլ է նոր յանցաւոր ճանաչուած անձանց սեղը, այլ է դատաստանական վճռով ճանաչուած յանցաւորինը, այլ է թեթև, և այլ է ծանր յանցաւորինը, այլ ամենքը



րաժանուած են սեռի և հասակի յարմար: Բանտերում մեծ ուշադրութիւն է դարձրած առողջապահութեան կանոնների վերայ. բանտարկեալների համար կայ եկեղեցի, դպրոց, հիւանդանոց, արհեստաւորների և երկրագործութեամբ պարագողների համար կան ամենատեսակ ընդարձակ միջոցներ, և ամենայն դր աղաս է իւր աշխատութեան արդիւնքը վայելել և թողատրուած է բաց օդի և բանտի ծառուղիների մէջ ձեւել. նոցա բարոյականութեան վերայ առանձին հրահրութիւն և ուշադրութիւն կայ բանտերի մէջ: Բանտարկելութեան ժամանակամիջոցն երեք անգամ պակաս է առաջուանից և օրէնքը բարի վարքով վկայուած բանտարկեալի աղատութիւնը զեջողութեամբ փութացնում է: Աքորականների սեղափոխութիւնը ուրով և ձմեռ ժամանակ արգելուած է:

Այսպէս դատաստանական նոր օրէնքը մարդասիրաբար պաշտպանելով և կարեկցելով յանցաւորին, երբէք չէ նուաստացնում մարդկային արժանաւորութիւնը և վրաւունքը, և եթէ յանցաւորի մէջ ապաշահանքի կայծ կայ, փարատում է նորա մոլորութիւնը և դարձնում է կրկին հասարակութեան պիտանի անդամ:

Պարտապահանջութեան օրէնքը այժմ իսպառ թեթեւացել է. մինչդեռ առաջ փողատէրը իրաւունք ունէր առանց դատաստանի բանտարկել պարտականին և ճնշել նորա զանազան զրկանքների տակ, այժմ պարտականի անձը չէ ենթարկուում ոչինչ պատժի և նա միայն իւր սեպհականութեամբ պատասխանատու է իւր պարտապահանջին: Աւստի պարտաւորին համար ոչ միայն չէ արգելուած իւր ընտանեաց խնամատա-

րութիւնը, այլ նորան աղաս միջոց է տրուում, որ եթէ չունի սեպհականութիւն, իւր աշխատանքով կարողանայ պարտքը վճարել:

Այսպէս ուրեմն Աղէքսանդր Բ. Այստեր դատաստանական օրէնքի բարենորոգութիւններովը արդարացաւ Մողմոն խնաստունի խօսքը. «Սիրեցէք զարդարութիւն ողբ դասէք զերկիր»:



Է.

Վեկողայոս Վայսեր զօրքի բարելաւութեան փափագը:—
 Աղէքսանդր Վայսեր Աւաստօպօլի զօրքին այցելութիւնը
 և ցոյց տուած խնամքը:—Օլինուորականութեան նորա-
 նոր կանոններ:—Օլինուորների ծառայութեան ժամանա-
 կամիջոցի կարճացնելը:—Բնդհանրական համադրային զե-
 նուորագրութիւն:—Վայսերան հրովարտակը:—Վիճա-
 կահանութիւն:—Ուսանողների արտօնութիւնը զինուո-
 րագրութեան մէջ:

ՕԼԻՆՈՒՈՐԱՆՍԵՆՈՒԹԵՆՆ կարգերի բարենորոգութիւնը համարեա կտակով էր աւանդուած Օդոստափառ Աղէքսանդր Բ Վայսեր իւր հանգուցեալ շօրից: Այսպէս էր ստում մահուան անկողնի մէջ Վեկողայոս Ե. «Ես իմ որդւոց պէս սիրում էի իմ զօրքը, որքան կարելի էր, աշխատել եմ բարւոքել նոցա վիճակը. եթէ չ'կարողացայ բոլորովին հասնել իմ նպատակին, պատճառն այն էր, որ կամ աւելի լաւ չէի կարողանում մտածել և կամ չէի կարող դիտաւորութիւններս իրագործել»: Աղէքսանդր Բ իւր շօր խօսքը իսկութեամբ պահպանեց և երբէք չ'պակասացրեց իւր սերը զօրքի և ժողովրդեան վերայից. դորա ապացոյցն է Նորա քսանեւհինգ տարուայ հոգատարութիւնը: Նա իւր գահակալութեան առաջին տարին մի ամբողջ ամիս

անձամբ շրջելով Աւաստօպօլի զօրքերի մէջ և ցոյց տալով նոցա ամենատեսակ խնամակալութիւն, օժանդակութիւն և մխիթարութիւն, ոչ միայն նոցա վշտերը թեթեւացրեց, այլ և բարեբաղդ արաւ այդ հայրենեաց պաշտպան հզօր սխոյեանը, մանաւանդ թագադրութեան օրը, երբ արժանացնում էր նոցա արքայական մեծամեծ ողջմեութեանը:

Նոյն տարին զինուորների 378,000 մտտադահաս որդիքը, ստանալով քաղաքական իրաւունք, ընտանական շրջանի մէջ ազատ կեանք վայելեցին. և միւս տարին 600 հազար զինուորական Աջնիխաններ ժողովրդականութիւն ստացան և մի նոյն ժամանակ պատժապարանները զինուորների շարքից արտաքսուեցան:

Մարմնական պատժի փոխարէն բարոյական պատժ սահմանուեցաւ: Օլինուորի անուներ գրվում էր զօրապետի (ДИВИЗИОННЫЙ) վճռով մասննի մէջ, որով զրկուում էր նա տամնապետի և այլ պաշտօն ստանալուց (УНТЕРЪ-ОФИЦЕРЪ), մինչև մի տարուայ անաբաւ ծառայութեամբ արժանի լինէր իւր անուներ մասննի միջեց ջնջելու վճռին: Իսկ 1863 թ. սահմանուեցաւ օժիցերների կարգապահութեան (ДИСЦИПЛИНА) նոր կանոնները, այսպէս զինուորը հայրենեաց պաշտպանի նշանակութիւն ստացաւ: Անգուստ զինուորը այնուհետև արտաքալում էր զօրքի կարգից. յանցաւորների գործը քննում էր Օլինուորական Վաստարանը և վճռում էր հրապարակաւ նոցա պատիժը: Այս օրէնքը հաստատուեցաւ 1867 թ. և սակնայն յանցանքի չափով որոշուեցան դատարանները—Վանդերի Վաստարան, Նահանգան Վաստարան և Պե-

անբռնարգում Վլխաւոր, Օլնուորական Վատարան, յան-
 ցաւորի գործը վճուուում է հրապարակական վերադնու-
 թեամբ և դատով: Այդ օրէնքը՝ պակասացնելով զինուո-
 րականութեան ժամանակամիջոցը, հնարք տուեց զե-
 նուորններին, որ երբ վերադառնան հայրենիք աշխատու-
 թեան ընդունակ և դեռ ժողովրդականութիւնից չ'խոր-
 թացած, պիտանի անդամ լինին հասարակութեան:
 Պարտաւորեալ զինուոր ժողովիք ժողովրդեան դասա-
 կարգերից առաջին անգամ որոշուեցաւ հազարից հինգ
 և սպա պակաս: Օլնուորականութիւնից ազատուեցան
 այն անձինք, որոնց ներկայութիւնը ընտանեաց մէջ իբրև
 միակ աշխատաւորի և բոլոր ընտանիքը կերակրողի, ան-
 հրաժեշտ էր: Օլնուորութեան փոխարինութիւնը
 կամ զինուորատուն (рекрутская квитанция) գնելը
 թոյլատրուած էր: Աւերջի բոլոր նոր կարգադրութիւն-
 ները միայն թեթևութիւն էին տալիս ժողովրդեան
 զինուորագրութեան գործի մէջ: Աղէքսանդր Բ. Ապսրը
 կամեցաւ հաւասարել ժողովրդեան բոլոր դասակար-
 գերը այդ պարտաւորութեան մէջ, որովհետև հայ-
 բնիքը պաշտպանելու համար ամենայն վիճակի ան-
 ձինք պարտաւոր են զէնք առնել: 1870 թուից սկսած
 ամբողջ երեք տարի զինուորականութեան բարենորո-
 գութեան Անձնաժողովը պարսպեցաւ այս հարցով
 Ապսեր մերձաւոր վերահայեցողութեան ասկ և վերջա-
 պէս յին յունուարի 1874 թ. Աղէքսանդր Բ. հրա-
 տարակեց ընդհանուր զինուորական պարտաւորութիւն:
 Հրովարդակի մէջ նշանաւոր են Ապսեր այս խօսքերը.
 «Անցեալը ապացուցանում է, որ պետութեան ոյժը զօր-
 քի շատութեան մէջը չէ, այլ իսկապէս նորա բարոյական

և մտաւորական յատկութեան մէջն է, որ հասնում է գե-
 րազանց զարգացման միայն այն ժամանակ, երբ հայրե-
 նեաց պաշտպանութեան գործը կ'ընի ընդհանուր ազգի
 պարտքը և երբ ամենքը անխտիր կ'միական այդ սուրբ
 գործի մէջ: Մեր հպատակների այդ զոհաբերու-
 թեան ձշմարիտ պատրաստակամութիւնը երաշխաւո-
 րում է մեզ թէ Մեր հրաւերը Ուուսաստանի սրտի մէջ
 համակրական արձագանք պիտի գանի: Մենք դորանում
 չ'սխալուեցանք: Մեր պատուական ազնուականները և
 այլ ժողովրդականները, որոնք զինուորութեանց ազատ
 էին, յայտնեցին Մեզ իւրեանց խնդազին ցանկութիւնը
 մասնակից լինել զինուորական ծառայութեան ծանր
 պարտաւորութեանը: Մենք սիրով ընդունեցինք այդ նո-
 ցա ուրախարար և վեհանձնական զգացմունքի արտայայ-
 տութիւնը և բարեբաղդ ենք, որ Նախախնամութիւնը
 յանձնել է Մեզ գայիտներ այն ազգի վերայ, որի մէջ
 հայրենեաց սէրը և անձնազոհութեան զգացմունքը
 աւանդ է մնացած ազգէ ազգ՝ իւր ամենայն դասա-
 կարգերի մէջ»:

Ընդհանրական զինուորագրութեան օրէնքով ամե-
 նայն նորահաս անձինք՝ 20 տարին լրացած, պար-
 տաւոր են ծառայել հայրենեաց զինուորների շար-
 քում: Արքա, որոնք վիճակահանութեամբ ընտրուում
 են, մտնում են զինուորների կարգը, իսկ որոնք վե-
 ճակահանութեան մէջ նշանակած թուից բարձր
 թուահամար են ստանում, նոքա զրկում են պետու-
 թեան պահեստի զօրաժողովի ցուցակում: Օլնուորու-
 թեան պահեստի զօրաժողովի ցուցակում: Օլնուորու-
 թեան ժամանակամիջոցը նշանակած է հինգ տարի.
 բայց խաղաղութեան ժամանակ զինուորական մինիսա-

րի կարգադրութեանն է յանձնած արձակել նոցա նաև ժամանակից առաջ: Միայն ամենայն հարստակ մինչև 40 ասորին ըսնալը զինուորութեան ցանկից չէ ջնջվում: Եթէ անհրաժեշտ հարկը պահանջէ, նա պարտական է թողնել իւր խաղաղական կեանքի վիճակը և, զէնք ասնելով, մասնակցել հայրենեաց պաշտպանութեանը: Ի նկատի ունելով առաջուան օրէնքը, որով զինուորագրութեան ենթարկուում էին մինչև 30 ամեաց հասակը և շատ անգամ զինուորը ստիպուած էր լինում թողնել կիներ, որդիքը և իւր ընտանեկան կառավարութիւնը լացով կոծով, և հրաժարուում էր նոցանից այլևս չ'աննուէրու յուսարեկութեամբ, պէտք է ասել, որ ներկայ կարգադրութիւնը ժողովրդեան բարօրութեան համար փրկարար միջոց դարձաւ. որովհետև զինուորը՝ դեռ չամուսնացած, տարով իւր պարտքը հայրենեաց, վերադառնում է տուն 27 ամեաց թարմ հասակում և ընդունակ է լինում գերդաստան կազմելու: Իսկ ընդհանրապէս զինուորութիւնը առաւել ազնուացաւ, ընդունելով իւր շարքերում ազնուականի, հարուստի, սոսկականի և ամենայն դասակարգի ժողովրդեան որդւոց: 'Նա մանաւանդ՝ ռամիկ և զեզջուկ դասակարգից ընտրուած զինուորը, աննելով իւր շարքում բարեկիրթ երիտասարդ, աշխատում է ստանալ նորա կատարելութիւնները. իսկ նորա ընկերը մարդասիրարար կրթում է նորան ուսումնական, բարոյական և քաղաքավարական բարեմասնութիւնների մէջ: Այս նպատակի յաջողութիւնը աննուէցաւ Ալաոնական պատերազմի շատ զէպքերում:

Չ զինուորութիւնից ազատուում է առ ժամանակ

գերդաստանի միակ աշխատաւոր որդին հօրը ծերութեան ժամանակ, նմանապէս և նոքա, որոնք շարունակում են իւրեանց ուսումը միջնակարգ և բարձր ուսումնարաններում: Օրէնքը սկսած ստորին կարգի զբարոցների աշակերտներից, մինչև համալսարանական ուսանողը իւրեանց ուսման համեմատ կարճացնում է զինուորական ծառայութեան ժամանակէտը:

Այդ օրէնքը առաւել նպաստում է առանց վիճակահանութեան ինքնայօրժար զինուոր զրուողներին: Չափային զինուորականութիւնը նոյնպէս և հեծելազօրը ստացան առանձին կանոններով սահմանուած ժամանակամիջոց և այլ շատ զիւրութիւններ:



Ը:

Օ ինուորական և Բժշկական—Վ իրարուժական Մկաղեմիաների բարենորոգութիւնը: — Օ ինուորական գիմնագիտնների և մասնաւոր դպրոցների բացուելը: — Օ ինուորական նորանոր բարենորոգութիւնները: — Օ ինուորական աստիճանաւորների ապահովութիւնները:

Օ ԻՆՈՒՐԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ ՆԵՔՍԱՆԴՐ Բ Այսեր ամենասիրելի պարապմունքներից մէկն էր: Նա միշտ զբաղուում էր զինուորականութեան նիւթական և բարոյական գրութիւնը բարւոքելու հարցով: Ն յս առաւել անհրաժեշտ դարձաւ, երբ ամենայն դասակարգի ժողովրդեան պարտաւորեալ եղաւ զինակրութիւնը: Նախ և առաջ նա հոգ տարաւ նորա ուսումնական մասին: Օ ինուորական և Բժշկական Վ իրարուժական Այսերական Մկաղեմիաներն իւրեանց ամենայն բաժանումներով առաւել ևս բարեկարգեցան. զինուորական գիմնագիտնների թիւը ամենայն տեղ շատացաւ, բացուեցան ինքնայօժարների Իւնկերական Ուսումնարաններ (Юнкерскія школы), իսկ զօրազորերի մէջ բացուեցան ստորին զինուորների համար խմբական դպրոցներ (ротныя школы) և արհեստանոցներ:

Ուրբան մեծ և բարձր էր Նեքսանդր Բ ի բարեբար կարգադրութիւնները որ հրատարակեցաւ 1875 թ:

Օ ինուորը՝ իւր ծառայութեան ժամանակ ուսման և արհեստի մէջ վարժուած, վերադառնում է իւր տունը, ասնելով իւր հետ չափաւոր կրթութիւն և ապրուստի մի ո՛ր և իցէ միջոց, և այդպէսով լինում է հասարակութեան պիտանի անդամ: Իւրաքանչիւր զինուորախումբ ունի այժմ իւր մասնադարանը և առանձին նշանակած տարեկան գումարը ուսումնական պիտոյքների համար: Ն յժմ կարգաւ գրելը նորընտիր զինուորի համար պարտաւորեալ է. եթէ նա խմբական դպրոցում առաջադէմ է, կարող է շարունակել ուսումը և գնդային դպրոցում, և ստանալ ունտէր-օժիցների կոչում: Եթէ յաջողութեամբ աւարտէ և վերջինի մէջ, նա կարող է մտնել իւնկերական դպրոց, ուր երկու տարուայ միջոցում նշանակուած քննութիւնը տալով, ստանում է օժիցների աստիճան: Իսկ եթէ կամենայ մնալ ունտէր-օժիցների կոչման մէջ, այն ժամանակ հինգ տարի ծառայելուց յետոյ՝ կարող է մտնել քաղաքական պաշտօնի, ուր լրացնելով 20 ամեայ արքունական ծառայութիւնը, ստանում է մշանջենական թօշակ տարեկան 96 ռուբլի կամ միանուագ 1000 ռ: Նւ այսպէս զինուորական նոր օրէնքը ոչ միայն օգուտ բերեց զինուորին, այլ և նոյն իսկ հասարակութեան, որովհետեւ զինուորանոցը հասարակաց կրթութեան դպրոց դարձաւ: Վ երջացան և այն շարագործութիւնները, որ առաջ լինում էին զինուորագրութեան ժամանակ. այժմ ամենայն մի անհատ իրաւունք ունի ստուգել ընտրութեան թերթը և ներկայ գտնուել վեճակահանութեան ժամանակ, որովհետեւ այս վերջինս հրատարակական է լինում: Բժշկական վերադնու-

Թեան համար կազմուած ժողովքը ազատուս է վիճակահանութիւնից և այն երիտասարդներին, որոնք զուրկ են մարմնական և մտաւորական առողջութիւնից կամ պակասութիւն ունին թէ մարմնի և թէ հասակի մէջ:

Օ ինտորների կենսական պիտոյքները մատակարարելու համար սահմանուած է ամենայն գնդի մէջ անձնագործ: Օ ինտորը իւր աչքի առաջ ունի իւր զգեստի և կօշիկների համար անխնայական և զինտորական անձնագործներից ընտրած նիւթերի օրինակը (образчикъ) և իրաւունք ունի չ'ընդունել, եթէ իւր զգեստի պատրաստութիւնը չ'համապատասխանէ այն օրինակին: Օ ինտորների իւրաքանչիւր խումբ ունի պահեստի շտեմարաններ, ուր ընդունուում է ամենայն ինչ, նոյնպէս այդ երկու ժողովի խիստ ընտրութեամբ: Օ զգեստի ձեւը առանձին անձնագործի և նոյն իսկ Այսեր բաղնախորձ հետազօրութեամբ ունի այժմ մեծ յարմարութիւններ և նորա պատրաստութեան ծախսը որոշուած է հատուցանել արքունուսա:

Աղէքսանդր Բ, իբրև Հայր իւր զինտորների, մեծ խնամք և հոգացողութիւն տարաւ նոցա ամենայն կենսական պիտոյքները բարւոքելու: Վա զիտէր, որ աշտաւոր մարդուն անդարար կերակուր է հարկաւոր: Վա ոչ միայն վերջ զրեց զինտորների սննդին մատակարարութիւնը աճուրդով տարուն, այլ և աւելացնելով միջոցները, իրենց զինտորներին յանձնեց ուսեստի հոգացողութիւնը:

Այժմ իւրաքանչիւր զօրախումբ ընտրում է իւր համար անտես, և ամենայն մի զինտոր ունի տես-


րակ, որի մէջ միշտ նշանակում է իւր ստանալիք և ստացած պաշարը: Վա ունի իրաւունք յայտնել իւր անբաւականութիւնը, եթէ մի որ և իցէ պակասութիւն դանէ կերակուրի և հացի մէջ: Վա իւր մասնաւոր աշխատութեամբ ձեռք բերած վարձքը աւելացնում է արքունուսա ստացածի վերայ, և այդպէս խումբը կարող է ունենալ աւելացրած զբանագրուխ և ուսեստի պաշար իւր ազատ իրաւունքի ներքև:

Օգոստափառ Այսեր ամենաջերմ խնամքը վերաւորեալ զինտորների վերայ առաւել ևս անմահացնում է Վորա անունը: Յիշենք այստեղ զինտորական հիւանդանոցների նորամոր կարգադրութիւնները և նոցա մշտջենական թոշակով ապահովութիւնը, որոնց վերայ, Աւաստօպօլի պատերազմից սկսած, Այսորը դարձրեց Վւր բարձր ուշադրութիւնը: Վա իւր թագադրութեան օրը նուիրեց մեծ զուամար զինտորական դասակարգի հիւանդների բարեկեցութեան և դպրոցների համար:

Վոյն խնամատարութեամբ բարեկարգեց զինտորական աստիճանաւորների կացութիւնը. 1858 թ. կրկնապատկեց օճիցերների բնակարանի համար տարեկան հասոյթը. Այսերական հրովարտակով 1859 թ. Աղէքսանդր Բ հրամայեց. «Մեր զօրաց Վեներալների, շտաբ և օրէր օճիցերների սնունդը բարելաւացնելը Մեր երջանկայիշատակ Հօր, Վիկողայոսի, ամենօրեայ հոգատարութեան առարկան էր: Աստարելով Մեր սրտի մերձաւոր այդ ցանկութիւնը, Միք կարևոր ենք համարում բարւոքել մեր զինտորական ծառայողների սնունդը»: Այդ հրովարտակի զօրութեամբ կրասեր

օՖիցերից սկսած՝ մինչև գեներալի տարեկան ռոճիկը աւելացաւ. նոյնպէս աւելացաւ և մի քանի դասակարգի պաշտօնեաների սեղանի (столовое) և ձիերի պահպանութեան փողը (фуражное):

Միկոլայոս Ապսեր արձանի բացման օրը՝ 17ին ապրիլի 1859 թ. աւելացաւ հրաժարեալ զինուորների և նոցա գերդաստանների թոշակը. մի և նոյն տարին աւելացաւ զինուորների և նոցա քահանաների ռոճիկը: 1868 թ. սահմանեցաւ տալ զինուորական աստիճանաւորներին բացի ռոճիկից օրական սնունդ պատրաստելի և ամառանոցի ժամանակ. իսկ 1874 թ. հրամայեցաւ առաւել ևս բարւոքել օՖիցերների վիճակը. այս ամենայն կարգադրութիւնները Աղէքսանդր Բ Ապսրը պահպանեցրեց ահագին դրամագլուխներ նուրիւրով: Ռուսաց զինուորական դասը՝ պարտաւորուած լինելով բարերար Ապսեր անօրինակ հայրական խնամքով ճակատաբաց սլանում է թշնամեաց դէմ և իւր արիւնքը և կեանքը երբէք չէ խնայում հայրենեաց պաշտպանութեան և Ապսեր փառաց համար, օրհնելով միշտ Մորա անդին կեանքը:



Թ.

Ազգային լուսաւորութեան բարենորոգութիւնները: — Ըմբռնատութիւն ուսումնարանների գրութեան ընդհանրապէս՝ 25 տարի առաջ և այժմ: — Ամենց կրթութիւնը: — Նոցա գործօնէութիւնը: — Ուսուցիչների ազատութիւնը: — Մամուլը: — Գրաքննական բարենորոգութիւն: — Պարբերական հրատարակութիւններ: — Գրականական և մատենագրական արդիւնաւորութիւն:

ԱՂԱՅԻՐԱՄԱՆԻՐ Բ Ապսեր ազգասիրական մեծ հոգսերից մէկն էր նոյնպէս ազգային լուսաւորութիւնը: Մորա շնորհիւ լոյս տեսաւ համալսարանական նոր կանոնադրութիւնը, որով աւելի զիւրամատչելի եղաւ բարձր ուսումը: 1864 թ. բացուեցաւ Օդէսայում Մոր Ռուսիոյ համալսարանը, 1869 թուին Ալաբազի համալսարանը, իսկ 1870 թ. Ապսերական հրովարտակով որոշուեցաւ բանալ համալսարան նոյնպէս և Միքիլայում: Մի քանի համալսարաններում հաստատուեցան մանկավարժական բաժիններ (педагогический факультет). շատ քաղաքներում հիմնուեցան կիւրափօրեայ լսարաններ: Շատացաւ գիմնապետների թիւը, բացուեցան զիշերօթիկ դպրոցներ, նոյնպէս և արհեստագիտութեան վարժաններ (техническая училища) մայրաքաղաքներում արքունական հոշուով և

շատ ուրիշ տեղեր երկրասնտեսական հաշուով (на земскія средства): Այս խի միջոցներից շատ քաղաքներում բացուեցան բէարական ուսումնարաններ, քաղաքային և գիւղական դպրոցներ: Ուսաստանի լուսաւորութեան արագաքայլ ընթացքին կարող է լինել ապացոյց այս համեմատական ցուցակը.

1855.	1880 թ.
Համալսարան 6 հ.	8
Ուսանողներ 3,511.	6,900
Գիմնաղիծներ 77.	130
Բէարական ուսումնարան.	67
Ժողովրդական դպրոցներ 5500.	25,000
Նահանգական և քաղաքային 495.	437
Աշակերտներ 32,000	1,100,000
Վարժապետանոցներ 1.	62

Այս թուի մէջ չեն Կովկասի, Ֆինլանդիայի և հոգեւոր դպրոցները: Ամենայն ուսումնական հիմնարկութիւններ ստացան նոր բարեկազմութիւն, որով ուսման ներկայ ընթացքը առաւել նպաստաւոր եղաւ ժողովրդեան զարգացմանը: Ալտաիական գիմնաղիծները զարգացնելով աշակերտին հին լեզուների և կարեւոր ուսմանց մէջ, այն հասունութեան են հասցնում, որ նա ընդունակ է լինում ամեն համալսարանական մասնագիտութեան:

1860 թ. հաստատեցան նոր կանոնադրութիւններ իգական սեռի կրթութեան: Այժմ ընդհանրապէս ամենայն տեղ, բացի երկուսն ժողովրդական դպրոցներից, բացուած են կանանց համար քաղաքային դպրոցներ և

գիմնաղիծներ: Ամենայն զարգացումը վերջին ժամանակներում երաշխաւորեց պետութեան, որ նոյա համար մասշտաբի պէտք է լինին նաև համալսարանական բարձր գիտութիւնները: Այժմ կանանց ուսումնարանների թիւը հասնում է 301ի, մինչդեռ 25 տարի առաջ 27 էր: Ուսուցչական գործի մէջ կանայք ամենայն տեղ արդինաւոր գործունէութիւն են ցոյց տալիս: Ժողովրդական կեանքի մէջ բարոյականութիւնը որ աւուր նշանաւոր զարկ է ստանում, որովհետև կանայք ստանալով չափաւոր գիտութիւն, այժմ վարում են զանազան պաշտօններ հեռագրատուների, գեղանոցների, գիւանատուների, մանուսկր անտեսական, վաճառականական և այլ հասարակաց կօնսունների մէջ, իբրև հաշուակալ, գործավար և գրադիր. նոյնպէս վարում են նոքա մանկաբարձի և դաստիարակի (губернантика) պաշտօններ:

Հասարակաց կրթութեան նպաստաւոր եղան բարանները, ընթերցարանները, մուզէումները, բուժատունները և արուեստահանդէսները, որոնք մանուսկր վերջին տասն տարիներում ամենայն տեղ աւելացան: Արքունական և քաղաքային ուսումնական հիմնարկութիւններին ոչ պակաս գործակից եղան և մասնաւոր անձանց բացած ստորին և միջին կարգի ուսումնարանները, որոնց մէջ նոյնպէս երկու սեռից հազարաւոր աշակերտք աւարտելով սահմանած ուսման ընթացքը, մտնում են բարձր կարգի ուսումնարաններ և կամ հասարակական կեանքի մէջ:

Ուսուցչի գործը այժմ առաւել յարգ և պատիւ ունի հասարակաց աչքի առաջ, նախ՝ որ Այց-

սերական նոր սահմանադրութեամբ բարեօրէցաւ նոցա կենսական միջոցները և մշտնջենական թոշակը աւելացաւ, և երկրորդ՝ որովհետև ժողովուրդը գնահատում է նոցա արդիւնաւոր մշակութիւնը. այնպէս որ, եթէ քահանան եկեղեցւոյ բեմից հասակաւոր մարդկանց բարոյական առաջնորդն է, ուսուցիչն ևս ճանաչուում է սուտ մարանի բեմից նորահասնների դէպ ի մարդկային կատարելութիւնը առաջնորդող և պատրաստողը: Որովհետև ուսումնարանների թիւը միշտ աւելանում է, այդ պատճառաւ օր աւուր զգալի կարօտութիւն է տեսնուում արդիւնաւոր վարժապետների: Մի և նոյն կարօտութիւնը երևում է ուսումնարանների մէջ. ժողովուրդը հասկանալով այժմ ուսման անհրաժեշտ լինելը, մեծ եռանդ ունի դէպի դաստիարակութիւնը: Ամենայն դիւր և քաղաք իւր վարչութեան ժողովների մէջ առաջին հոգացողութիւն դարձնում է դպրոցներ բանալուն և ամենայն տեղ ժողովրդական դպրոցների տեսչութիւնը միայն այդ է առաջարկում ժողովրդեան: Տոմսի, Ա օրօնեժի և Թիֆլիսի մէջ այս միջոցում մեծ ջանք կայ համալսարան բանալու:

Ազգային լուսաւորութեան գործի մէջ գանձարանը վճարում է այժմ 16,760,376 ռուբլի, մինչդեռ 25 տարի առաջ վճարում էր միայն 2,833,000 ռուբլի: Ա երջին քսաննահնդ ամեայ թագաւորութեան շրջանում շատ դպրոցների մէջ աշակերտները սովորում են զանազան արհեստներ: — Համեմատելով Ռուսաստանի այս ուղղութիւնը առաջին ժամանակների հետ, կարելի է այս լոյնածաւալ երկրի համար հսկայաբայլ առաջադիմութիւն համարել. Փառք, պատիւ Աղէք-

սանդր Ռ Վայսեր, որ իւր անօրինակ խնամակալութեամբ միշտ հսկում է իւր ժողովրդեան բարօրութեանը, և ամենայն բարեմիտ անձն կարող է դասել թէ նա ուրբան ստաժանական անբուն տքնութեամբ զուում է իւր կեանքը հայրենեաց:

Ազգային լուսաւորութեան գործի մէջ մեծ դեր է խաղում մամուլը. իսկ մամուլի զարգացումը մեծ մասամբ կախուած է գրաքննութեան ուղղութիւնից և ազատութիւնից: Աղէքսանդր Ռ 1864 թ. հաճեցաւ հաստատել գրաքննութեան նոր կանոնադրութիւններ, այս կանոնադրութեամբ մայրաքաղաքների պարբերական հրատարակութիւնները և մինչև 10 տարածական թերթ ինքնուրոյն աշխատասիրութիւններ և ոչ պակաս 20 թերթից թարգմանութիւններ նախընթաց գրաքննութիւնից ազատուեցան: Ա երջացաւ նոյնպէս Վայսերական ակադիմիական և ուսումնական ընկերութիւնների, գծագրութեան, յատակագծի և երկրաքարտի նախընթաց գրաքննութիւնը, և գորա փոխարէն սահմանեցաւ միայն պարտազանցներին ենթարկել որոշեալ տուգանքի: Այս դիւրութիւնը շատացրեց մանաւանդ պարբերական հրատարակութիւնների թիւը, առաւել տարածեց ժողովրդոց մէջ ընթերցասիրութիւնը և զարգացրեց ժողովրդի հետաքրքրութիւնը դէպի քաղաքական կեանքը: Ա երջին տասն տարւոյ միջոցում պարբերական հրատարակութիւնների թիւը աւելացաւ այնպէս, որ ներկայ 1880 թուականին 608 տեսակ օրական, շաբաթական և ամսական լրագրեր և օրագրեր են հրատարակուում: Աւելացան նոյնպէս ժողովրդական գրեանք, մանկական փոքրիկ գրքոյկներ և տետրակներ, նմանապէս

մանկավարժական և սնտեսական պարբերական հրատարակութիւններ, զիւրամատչելի, արժան գնով: Դողովրդական կեանքի մէջ ընթերցանութեան և զարգացման եռանդը այնքան ընդհանրացաւ, որ հարկ եղաւ շատ քաղաքներում ընթերցարաններ և լսարաններ բանալ ուր ուսմիկը բաղնութեամբ յաճախում է իւր ծարսւը յագեցնելու: Այս տեղերում նա լսում է ոչ միայն պատմական հետաքրքրական և երևելի անցքերի դասեր, — այլ և բնական պատմութիւն, ուսումնական և արուեստական նորանոր տեղեկութիւններ:

Ուսաստանը վերջին քսան և հինգ տարուայ միջոցում ծնաւ արհեստի և գիտութեան արդիւնաւոր մշակողներ և գրականութիւնը ծաղկեցնող շատ անձինք: Արաժշտութիւնը և նկարչութիւնը նոյնպէս ունեցան տալանդաւոր ներկայացուցիչներ, որոնց անունները յայտնի են նաև Աւրուպայի մէջ:

Ժ.

Ուսաստանի դրամական վիճակը: — Փոխառութեան շարժառիթները: — Վանձարանի եկամուտների նոր աղբիւրները: — Վաճառականութեան դիւրութեան և արդիւնաւորութեան միջոցները: — Արկաթուղի, հեռագիր, ծովային հաղորդակցութիւն: — Աւերբին արդիւնաբերութիւն: — Անցեալ և ներկայ հաշիւներ: — Վանձարանի միութիւն:

ՊԵՏՈՒԹԵԱՆ ամենանշանաւոր պորութիւնը նորա սնտեսական դրամական ուժի մէջն է. ելլամոյց խոհեմ վարչութիւնը, իւր բոլոր մանրամասնութեամբ, է զուրաւոր միջոց նորա նիւթական և բարոյական զարգացման: Աղէքսանդր Ռ իւր ժառանդական գահը բարձրացաւ, երբ Ուսաստան այդ կողմանէ աննախանձելի վիճակի մէջ էր: Աւաստօւրի պատերազմի ամենածանր ծախքերը ոչ միայն արքունի գանձերը սպառեցին, այլ և առիթ դարձան մեծագումար պարտքի, մինչև 65,232,000 ռուբլոյ: Պատերազմի հետևանքը, նորանոր բարեկարգութիւնների և երկաթուղիների կարևորութիւնը կրկնապատակեց պարտքը:

Վայսրը զանձարանի բարենորոգութեան գործի մէջ մեծ խնամք տարաւ և ժողովրդեան բարօրութեանը, թեթևացնելով նորա հարկերի ծանրաբեռնութենից և ընդարձակելով վաճառականութիւնը զիւրացնող միջոց-

ները: Տաժանական էր օղի ծախելու իրաւունքը մէկ մարդու ձեռք տալը, ինչպէս հին ժամանակներում սովորութիւն էր դարձած: Այդ իրաւատէր անձնը (որ համարեա միշտ Հրէայ էր լինում) իւր սովորական շահամուծեան հետ միացնելով հազարաւոր խարդախ պաշտօնեաների խաբէբայութիւնը, ոչ օղու ուժի աստիճանը և ոչ որոշուած դինը պահպանում էր, և միշտ խեղդում էր մանուսանդ խեղճ ուսմկին և զիւղացուն: 1860 թ. այդ օրէնքը վերացաւ. խմիչքի վերայ դրուեցաւ մաքս և վաճառողը՝ վճարելով օրինաբար սահմանեալ բաժր, ստանում է ներսից և արտասահմանից իւր ապրանքը և ազատ վաճառում է. իսկ ժողովուրդը այդ անխարդախ վաճառատեղերից է գնում: Գանձարանը այժմ ստանում է 225,312,680 ռ. մաքս, մինչդեռ 25 տարի առաջ, առաջին ծանր կանոնով ստանում էր միայն 79,282,000 ռուբլի: 1863 թ. մաքսերի կանոնները փոխուեցան. նմանապէս առևտրական իրաւութիւնների նոր կանոնները նպաստեցին վաճառականութեան և գործարանների շրջանը ընդարձակելուն:

Այն թուականին գլխահարկը (подушная подать) վերջացաւ և որոշուեցաւ ոչ գլխից, այլ կայքերից ստանալ այն, որով մեծ զիւրութիւն ստացաւ կայք չունեցող ժողովուրդը:

Այդ նոր կարգադրութիւնները նոյնպէս դարձան արհեստի և վաճառականութեան բարգաւաճութեան նպաստող միջոցներ: Գործարանների և արհեստաւորների գործօնեութիւնը այնքան ընդարձակուեցաւ 25 տարուայ միջոցում, որ նոցա 170 միլիոն դրամագլուխը

այժմ հասաւ 430 միլիոնի: Արտասահմանից ներս մտնող ապրանքի համար նոր թարիֆ սահմանեցաւ և թեթեւացան մի քանի տեսակ ապրանքների մաքսերը: Այդ զիւրութիւնը այն աստիճան ընդարձակեց վաճառականութիւնը, որ, փոխանակ 16,778,000 ռուբլի մաքսի, այժմ 25 տարուայ յետոյ ստացուում է 88,544,000 ռուբլի: Պետութիւնը բացեց 280 արքունի բանկեր. այդ օրինակին հետևելով ժողովուրդը, ընկերութիւններ կազմելով, բացեց շատ տեղեր ակցիաների ընկերութիւններ, բանկեր և կանտօրներ, որոնց թիւը նոյնպէս 25 տարուայ մէջ 81ից հասաւ 513, իսկ դրամագլուխը 10,578,000 ռուբլուց 2,149,327,000 ռուբլու:

Իսկ ամենամեծ միջոցը վաճառականութեան ընդարձակութեան համար եղաւ երկաթուղիների շինութիւնը, որ այժմ լայնածաւալ Ռուսաստանի ամենայն կողմերը միացրեց Աւրոպայի հետ. մինչդեռ 25 տարի առաջ Ռուսաստանը ունէր երկու զիծ՝ մի միայն Պետերբուրգից, Մոսկվա և Վարսապիա: Այժմ 22,000 վերստի է հասնում նորա երկաթուղիները, և հեռադրական զիծը զիւղ և քաղաք միացրել է միմեանց հետ: Փոստայի հաղորդակցութեանն ևս նպաստելով երկաթուղին, ոչ միայն թեթեւացրեց վճարքը, այլ և աւելացրեց գանձարանի օգուտը:

Սոփային հաղորդակցութիւնը շատ ընդարձակեցաւ. Ասյսեր կառն էր շքեհաւանների ընկերութիւններ հաստատել, ապահովութիւն տալով նոցա պետութեան գանձարանից: Ռուսաստանի Շքեհաւանների և Վաճառականութեան ընկերութիւնը (Русское общество

параходства и торговли) իւր բաղմնաթիւ շորենաւ-
 ներովը ծառայում է վաճառականութեան հարորդակ-
 ցութեանը բոլոր ծովերի վերայ մինչև՝ Ավլիանոս: Ապ-
 մուտեցան նոյնպէս և այլ շատ ընկերութիւններ ծովե-
 րի և գետերի հարորդակցութեան, շնուտեցան շատ
 նաւահանգիստներ: 1879 թ. Ռուսաստան մտած ապ-
 րանքի գումարը հասնում էր 368 միլիոն ռ. և դուրս
 դնացածը 369 միլիոնի: — Այս ամենայն նոր միջոց-
 ները գանձարանի եկամուտը, առաջուանից անհամե-
 մատ աւելի ճոխացրին. — Մինչդեռ 1856 թ. լի-
 նում էր հաւասարաչափ արդիւնք և ծախք 264 մի-
 լիոն, 1862 թ. 284 միլիոն, այժմ 1880 թ. հաս-
 նում է եկամուտը 628,965,000 ռուբլու: ‘Ներքին շա-
 հարերութեան միջոցներից նշանաւոր են. ժողովրդա-
 կան հարկ 118,870,175 ռուբլի, առևտրական իրա-
 ւաթղթերից 14,449,400 ռուբ., աղահանքերի մաքս
 11,350,700 ռ., ծխախոտից 14,027,00 ռ., շաքար-
 րից 5,132,000 ռ.: — Հարկաւ եկամուտի հետ աւե-
 լացաւ և ծախքի անհրաժեշտ նոր կարևորութիւն-
 ները, այնպէս որ 1879 թ. նորա ծախքերը, պատե-
 րազմական ծախքերի հետ, եղաւ 625,219,448 ռուբ.
 Այս հաշուումն է պետութեան պարտքերի տոկոս-
 ների վճարումը, տարին 171,537,509 ռ.: Իսկ գան-
 ձարանի պարտքն է 2,567,500,000 ռ., թղթադրամ—
 1129,990,000 ռ., մետաղե ֆոնդ—173,200,000 ռ.:

Պետութեան անտեսական տեսչութեանը օգտակար
 եղաւ «Պանձերի միութիւնը»: Այսպէս էր անօրի-
 նում Աղէքսանդր Բ Ապսերական հրովարտակով 1862
 թ. «Իւրաքանչիւր նահանգի մէջ սահմանել Հա-

շուտեսական Պարտա (КОНТРОЛЬНАЯ ПАЛАТА), պե-
 տական ելեմուտը կեդրոնացնել և միացնել Պանձերի
 Մինիստրութեան իրաւունքի ներքոյ. նորա կենթադը-
 րեալ գանձարանումը, ստանալ ամեն տեսակ պետական
 եկամուտը և Մինիստրի սահմանած կանխահաշուով
 մատակարարել ամենայն ծախքերը և միշտ հրատարա-
 կել հաշիւը ի պետութիւն ընդհանրութեան“:



ԺԵ.

Ռուսաստանի անցեալ և ներկայ ընդարձակութիւնը: — Ժողովրդոց թիւը: — Պատերազմների այլ և այլ շարժառիթները: — Նորանոր յաղթանակներ: — Տիրապետութիւններ: — Մեծեր: — Կովկաս: — Թիւրքիստան: — Ալանական ցեղերի աղատութիւնը: — Խաղաղական գաշինք: — Մեղրկովկասեան երկրի ընդարձակելը: — Ռուսաստանի ցամաքային և ծովային պատերազմական ոյժը: — Օկնուորական ծախքը: — Օկնուորական դպրոցների թիւը:

ՉԿԵՅ և ոչ մի Եւրոպական պետութիւն որ Ռուսաց Ապսերութեան հաւասար ընդարձակ գետին ունենայ: Ռուսաստանը կազմում է մեր երկրագնդի բոլոր ցամաքի իններորդ մասը — 395189 քառակուսի մղոն. այս հաշուի մէջ վերջին 25 տարիները աւելացաւ 30,000 մղոն: Իսկ ընդհանուր ժողովրդեան թիւն է 95,500,000, որից վերջին 25 տարւայ մէջ աւելացածն է մինչև 30 000,000 անձինք: Բայց կային պայմաններ, որ շարժառիթ եղան Աղէքսանդր Բ Ապսեր զէնք բարձրացնելու: Սորա առաջինն էր դրացի լեռնական ժողովրդոց անհանդիստ յարձակումները, որոնցից ապահովել իւր սահմանները և ժողովուրդը, երկրորդ շարժառիթն էր՝ մայրել վաճառականութեան ճանապարհների արդէնտիթ և ստպատակող երկիրները և

ազատ հաղորդակցութիւն բանալ դէպի Ասիա և Հնդկաստան. իսկ երրորդը — ազատել Ալանական և Բալկանեան քրիստոնեաները Տաճկի կրօնամով բռնութիւնից: Այս երեք կարևոր պահանջները Ռուսաց Ապսերութեան համար ստիպողական էին: Ամբողջ մի դար էր, որ Ռուսաստան զէնքով և ամենայն զօրութեամբ երբեմն պաշտպանողական և երբեմն արձակական դիմամրցութեամբ դիմում էր դէպի այդ նպաստները: Սոցա մէջ արևելեան հարցը հանրածանօթ է. թէ այս և թէ միւսները սկսել էին Մեծն Պետրոս և Նիկոտարինէ Բ, բայց յաղթական պակը նախախնամութիւնը թողել էր Աղէքսանդր Բ Ապսեր: Ռուսաստանի շինական սահմանի դրօշակը կանգնեցաւ Մեծը գետի եզրերը 1838 թ.: Արևելեան Կովկասը 25 օգոստոսի 1859 թ. հնազանդեցաւ Ապսեր գայիսնին. Չեչենի - Վաղխաստանի հողերը զօրագլուխ իմամ Շ ամիլը խոնարհեցրեց զլուսը Աղէքսանդրի գահի պատուանդանի տակ և 21 մայիսի 1864 թ. բոլոր արևմտեան Վաղխաստանը իւր լեռնական ամբոխով հպատակեցաւ Ռուսաստանին և այսպիսով վերջ եղաւ դարաւոր արիւնհեղութեանը:

Այդ իսկ թուականին հիւսիսային սառնամանեաց որդիքը անցան հարաւային աշխարհներ, յաղթեցին անվրդով տոկունութեամբ արևի տապին և քաջութեամբ յաղթանակելով թշնամոյն, մասան Թիւրքիստան և Թաշկենտ. 1868 թ. առին Ամրդանա և Բուխարա. 1873 թ. Խիվա, հետևեալ տարին Աօկանի խանութիւնը, որ յետոյ 1876 թ. անուանուեցաւ Պերգանի նահանգ:

Աղէքսանդր Բ ամբողջ երկու տարի մեծ հող տարաւ բանակցութեամբ և խաղաղական միջոցներով ազատել սլաւոնական ցեղերը այն անհնարին նեղ սակրութիւններէց, որ նոքա տանում էին Օսմանեան կառավարութեան տարօրինակ բռնութեան տակ և կրօնամոլ ժողովրդեան երեսից, և որ առիթ տուին հեազհեաէ Հերցոգովիններին Բօսնիացիներին և Բուլղարներին ապստամբելու: Բայց խաղաղասէր Աղէքսանդրի բաղձանքը չ'կատարուեցաւ և հարկ եղաւ մեծ զոհաբերութիւններով զնել նոցա փրկութիւնը. Վորա Այսսերական հրովարտակը 12ին ապրիլ 1877 թ. հրամայում էր Ռուսաստանին զէնք բարձրացնել Օսմանեանց դէմ, ոչ երկրի տիրապետութեան, այլ կրօնքը և ցեղակից ազգերը ազատելու համար: Աղէքսանդր Բ, որ իւր հպատակների առաքինութեան միշտ նախանձաւոր էր և Վորա սիրտը բորբոքում էր այդ եռանդը, կամեցաւ անձամբ առաջնորդելով իւր կառիճ զօրքերին, քաջալերել նոցա այդ փրկարար ձեռնարկութեան մէջ. Վա գործակից և վաստակակից եղաւ նոցա՝ վեհ սրտով անցաւ Վանուբը և մայիսի 25 մինչև զեկտեմբերի 5 զանուում էր նոցա հեա պատերազմի դաշաւմը: Եյս քաջալերութիւններով էր, որ Ռուսաց զօրքը անցաւ Բալկանեան լեռները, յաղթելով ձմեռուան խստութեանը և թշնամոյն զխնադրութեանը այնպիսի քաջութեամբ, որոյ օրինակը չ'կայ աշխարհի պատմութեան մէջ. Բալկանեան լեռները հազարաւոր սարկներով պիտի սարսին Աղէքսանդրի անունը լսելիս: Արդարև մեծ էր զոհաբերութիւնը, բայց առաւել մեծ էր Այսսեր նպատակը: Որքան բնական և ար-

հեստական որոգայթներ և արգելքներ ևս երան քաջա-յաղթ զօրքերի դէմ բայց նոքա չ'յաղթահարուեցան և ոչ երբէք թուլացան: Իտալի նշանը և Այսսեր սէրը զօրակեզ եղան նոցա. ձեղքեցին լեռները, փշրեցին ամրակուռ բերդերը և ինչ որ անհնարին էր և անառիկ, հնարաւոր եղաւ նոցա և մնացելի: Աործանեցաւ Պլեման, խոնարհեցաւ Ազրիանուպօղը, փշրուեցան Արդասանի և Վարսի պարիսպները, հնազանդեցաւ Արզուումը և զօրքը հասաւ Բիւզանդիայի հին մայրաքաղաքի դուռը: Օսմանեան Սուլթանը խոնարհեցաւ Աղէքսանդրի Օգոստափառ Սպարապետի առաջ Սան-Ստեփանոյի մէջ խաղաղութիւն խնդրելու և 19 փետրուարի 1878 թ. վերջ եղաւ արիւնաճուփ պատերազմին ընդունելով Ռուսաց առաջարկած դաշինքները, որ հաստատուեցան 27 յունուարի Սան-Ստեփանոյի և յուլիսի 1ին Բեռլինի վեհաժողովի մէջ:

Աղէքսանդր Բ Այսսեր քաջայաղթ զօրքերի արիւնով զնուեցաւ Բալկանեան թերակղզւոյ միլիոնաւոր քրիստոնեաների աղաաութիւնը. Ռումինիան, Սերբիան, Չերնօզօրիան ստացան անկախութիւն: Արևելեան Ռումելիան—ինքնավարութիւն. Բօլղարիայում հաստատուեցաւ քրիստոնեայ իշխանութիւն:

Սան-Ստեփանոյի 16 յօդուածը պարտաւորում էր Օսմանեան Սուլթանին շայաստանի տաճկական մասին մէջ բարենորոգութիւններ անել տեղական պահանջմունքների համաձայն և պաշտպանել շայերին զբացի կրօնամոլ և կիսավայների ցեղերի բռնութիւններեց և հարստահարութիւններէց: Բերլինի Վեհաժողովը ոչ միայն իրաւացի համարեց Ռուսիոյ այդ մարդասիրա-

կան պահանջը, այլև իւր դաշնադրութեան 61 յօդուածում աւելացրեց, որ խոստացեալ բարենորոգութիւնները անյատաղ իրագործուին Եւրոպայի տէրութիւնների անմիջական հսկողութեան ներքոյ:

Ռուսաստանի երկիրներին միացան նոյն դաշնագրի զօրութեամբ Բեսարաբիոյ այն մասնը, որ 1856 թ. Փարիզու դաշնագրոյն զօրութեամբ անցած էր Օսմանեանց: Միացան նմանապէս Ռուսաստանին Վարսա և Բաթումը իւրեանց գաւառներովը:

Այլըստանդր Բ. իւր տէրութեան զինուորական ուժը միշտ բարձր է պահում: Ռուսաստանը վերջին պատերազմի ժամանակ ցամաքի վերայ ունէր՝

հետեակ զինուոր.....	1,016,189
հեծելազօր	212,701
ինժեներ	143,574
ժանդարմներ	5,815


ընդամենն... 1,478,279

Իսկ խաղաղ ժամանակ պահում է միայն 882,978 զինուոր:

Ռուսաստանի ծովային զօրութիւնը Աւաստուպօլի պատերազմից յետոյ Աւ ծովի նաւատորմիցը ոչնչանալը թէպէտ նշանաւոր կերպով նուազած էր, բայց նա այժմ իւր առաջուայ աստիճանին կրկին հասաւ. այնպէս որ նա ներկայումս իւր նաւատորմիցի մէջ ունի 23 զրահաւորներ (броненосецъ) և զանազան նոր սխաւաններով շինուած նաւեր: Իսկ վերջին տարիներումս աւելացան նաև ժողովրդական Նաւատորմը, որ

կազմուեցաւ Պետրբուրգի, Մոսկվայի և այլ նահանգների յօժարակամ նուիրաբերութիւններից:

Յամաքային զօրքերի ուսումնարանների թիւը հասնում է այժմ 64 զիմնասլանների. իսկ ծովային զօրքերինը 65: Յամաքային զօրքերի տարեկան ծախքն է՝ 189,669,886 ռուբլի, իսկ ծովային զօրութեան ծախքը է 28,546,991 ռուբլի:



ԺԻ.

Նոր շաստառութիւն: — Նորա կազմուելուն սկզբնապատճառը: — Ծայրագոյն Տնօրէն Անկնաժողով: — Նախագահ Կոմս Լօրիս-Մելիքեանցի երաւունքները և գործքերը: — Վայսեր յորելինի և ազատութեան առթիւ ժողովրդեան նուէրքները: — շայոց շայրապետի նուէրը: — Շնորհակալեաց հրովարտակները:

ԱՂԼԵՒՍԵՆԳՐԻ Բ. ներկայ 1880. բարեհաճեցաւ նորանոր կարգադրութիւններով պահպանել Ռուսաստանի վարչութեան ուղղութիւնը և ժողովրդեան անդորրութիւնը:

Այս բարենորոգութիւնների սկզբնապատճառներից, կարելի է ասել, գլխաւորը եղան այն անախորժ արկածները որ անցեալ տարի երեք անգամ կրկնուեցան բազմերախտ Վայսեր սրբազան Անձնաւորութեան դէմ:

Այսպիսի անադորոյն դաւադրութիւններ թէպէտ շատ անգամ պատահում էին Աւրոպիոյ քանի թագաւորութեանց մէջ, բայց Ռուսաստանի համար շատ հեռի և օտարաօտի էր, որովհետեւ նա անպայման սիրով և երախտագէտ հոգեով միշտ պաշտում է իւր Թագաւորը: Նա դեռ չէր մոռացել այն տխուր արկածները, որ տասն և հինգ տարի առաջ տեղի ունեցան Պետրբուրգում և Փարիզում:

Այդքին արկածները պատահեցան ճիշտ այն ժամանակ, երբ Ռուսաստան պատրաստուում էր մեծահանդէս ուրախութեամբ դիմաւորել իւր սիրելի Թագաւորի քսան և հինգամեայ յորելինին: Այսպիսի հակասական դէպքեր առաւել վրդովեցին ժողովրդեան խաղաղ կեանքը:

Նախախնամութիւնը իւր սներեւոյթ Աջոյն հովանաւորութեամբ միշտ փրկեց և անասան պահեց իւր Օծեալը: Ուստի ժողովուրդը իւր անպայման սէրը և երախտագէտութիւնը արտայայտեց ոչ միայն ջերմեւանդ ազօթքով իւր շնորհակալութեան ձայնը բարձրացնելով առ Աստուած, այլ և մեծամեծ զոհարելութեամբ՝ յիշատակ ազատութեան անդին կենաց և յիշատակ քսանեւհինգ ամեայ Թագաւորութեան Աղէքսանդր Բ Վայսեր: Ամենայն տեղ սկսան Նորա անունը անմահացնելու խորհուրդներ, մայրաքաղաքներից սերսեալ մինչև փոքրիկ գիւղաքաղաքները որոշեցին կանգնել նորանոր բարեգործական հիմնարկութիւններ — Աղիւղեցի, Հիւանդանոց, Անկեւանոց, Վայրոց, Արհեստանոց «Ալեքսանդրովսկի» անունով:

Շայր՝ իբրև Ռուսաստանի ազգաբնակչութեան անդամ, ամենայն տեղ մասնակցեցաւ այդ հիմնարկութիւններին իւր առատ նուիրանօք:

Նորա ընդհանրական հոգեւոր գլուխ Պէտր Գ. վեհաստիճան Վաթողիկոս և Ծայրագոյն Պատրիարքը ամենայն շայոց՝ մատոյց Թագաւոր Վայսեր Ներքին գործոց Մինիստրի ձեռօք իւր արժանի նուէրը: Այս նուէրն էր մի Աւետարան մագապատեայ նուրբ ձեռագիր, որ իւր երվներանդ նկարներովը միանգա-

մայն ապացոյց էր ԺԿ դարու հայկական գրչի և ճարտարութեան բարձր կատարելութեանը: Նորա կազմի ոսկեձող կողերը մի համառօտ բովանդակութիւն էին ազգային փառաց և եկեղեցւոյ պատմութեան: Առաջին կողի վերայ նկարուած էր Հայաստանի առաքելոց թաթէոսի և Բարդուղիմէոսի, Առաքելապատիւ Մեծին Գրիգորի Առաւորչի և Սուրբ Մեսրոբի պատկերները, նմանապէս ըստաւորչի աջը և զեղարդը: Հայրապետական գաւազաններից դէպի վայր տարածուած է մինայազանդ նկար դաստառակին, որ աշխարհի Փրկիչը հաճեցաւ առաքել Աբգար անդրանիկ քրիստոնեայ հայ թագաւորին: Իսկ երկրորդ կողի վերայ Հայաստանեաց առաքելական մայր եկեղեցւոյ Սուրբ ԼՅմիածնի քանդակը: Առաջին կողի ներքնակողմը ոսկի առխտակի վերայ գրած է Ռուսաց լեզուով «**Օգոստապառ խնամակալի Հայոց եկեղեցւոյ, թագաւոր Այստեր Աղէքսանդր Բ. ԼՅմիածնի Պատրիարգ, Օայրագոյն Աթոզեկոս Հայկական ազգի Գեորգ Գ. 1855—1880:**

Թագաւոր Այսրը առանձին բարեյոժարութեամբ ընդունելով 11 մարտի այդ նուէրը և նամակը, որոյ մէջ Վ. Ե. հափառ. Հայրապետը յայտնում էր իւր խորին զգացմունքը և բարեմաղթութիւնը, բարեհաճեցաւ հրամայել ներկայացնող Մինիստրին յայտնել Նորին Օծութեան Իւր ախորժ ընդունելութիւնը և բարձր շնորհակարութիւնը:

Աղէքսանդր Բ. տեսնելով իւր հպատակ ժողովրդեան անվրդով և անձնանուէր ջերմեւանդութիւնը և հողւով չափ համակրութիւնը և սէրը, հաճեցաւ նու-

րա անդորութիւնը առաւել ևս անդրդուելի հիման վերայ պահպանել: Հրովարտակաւ 12 փետրուարի հաստատեց Պետրբուրգի մէջ Օայրագոյն Տնօրէն Անձնաժողով Պայծառափայլ կոմս Հայազգի Միքայելի Գարիէլեան Աօրիս-Մէլեքեանցի նախագահութեամբ, տարով նորա անսահման իրաւունք Պետութեան ընդհանուր վարչութեան վերայ:

Այսերական հրովարտակաւ, որ սուեց Առաւմարիչ Աննադին հրամայում էր այսպէս «**Հաստատ որոշելով սահման դնել յանդուզն չարագործերի այս վերջին օրերումն անդադար կրկնած փորձերին, որ ձգտում են խախտել պետութեան կանոնները և վրդովել ժողովրդեան հանգիստը, Մենք արժան համարեցինք՝ ա. Հաստատել Պետրբուրգի մէջ Օայրագոյն Տնօրէն Անձնաժողով, պետութեան և ժողովրդեան անդորութիւնը ապահովելու համար: — բ. Օայրագոյն Տնօրէն Անձնաժողովը կազմել զլիաւոր նախագահից և նորա անմիջական ընտրութեամբ նշանակեալ անդամներից: — գ. Աշանակել զլիաւոր նախագահ Խարբովի ժամանակաւոր գեներալ նահանգապետ, մեր աջակեց զօրապետ, պետական խորհրդարանի անդամ, հեծերազօրաց զօրապետ կոմս Աօրիս-Մէլեքովին՝: Մնացեալ ութն յօդուածներումն ևս բովանդակուումէին այլ և այլ անօրէնութիւններ գործին մասնաւոր պարագաներին վերաբերմամբ: Ե. յս Հրովարտակաւ տարով կոմս Աօրիս-Մէլեքեանցին լիակատար իրաւունք, միանդամայն հրամայում էր բոլոր պետական իշխանութեան, զլիաւոր նահանգապետներին, քաղաքապետներին, գնտուորական և քաղաքական բարձր տեսչութիւններին անմիջապէս**

կատարել կոմս Լօրիս-Մելիքեանցի բոլոր պահանջները և յանձնում էր Առաւարտիչ Սինադին կատարել այդ մասին վերաբերեալ բոլոր կարգադրութիւնները:

Նորահաստատ ժողովոյն գլխաւոր նախագահը ընդունելով իւր ստանձնած այդ բարձր փնւմ պարտաւորութիւնը, հրաւեր կարգաց 14 փետրուարի մայրաքաղաքի ժողովրդեան, աջակից լինել ինքեան այդ ծանր գործի մէջ:

Մեծախնամ Ասցսեր խօսքերը արձանագանք ստացան պետութեան բարձր պաշտօնատարերի և մինչև վերջին ժողովրդեան սրտի մէջ: Նոքա գործակից և փաստակակից լինելով Ծայրագոյն Անձնաժողովոյն նախագահին հրաւիրանօք, կարձժամնակի մէջ Ռուսաստանից փարատեցաւ ամենայն տեսակ կասկածանք և անհանգստութիւն: Ժողովուրդը վերադարձած դաւա իւր դարաւոր խաղաղութիւնը և անդորրութիւնը: Ազատուեցան հազարաւոր անմեղ մարդիկ—համարաբանական ուսանողներ, գիմնպիւնական աշակերտներ, պաշտօնատէր անձինք, և ժողովրդեան շրջանից շատ երիտասարդներ, որոնք ենթարկուած լինելով մասնաւոր և անհիմն կասկածանայ տեղական վարչութիւններից, կամ արքորուած էին, կամ բանտարկուած, և կամ օտարկանութեան խիստ նկատողութեան տակ ձնշուում էին: Սոցանից ոմննք ևս զիւրութիւն ստացան, և ոմննց վերաբերեալ գործերն վերաքննել հրամայուեցաւ և ամեղներին դարձնել իւրեանց ուսում առած տեղերը, պաշտօնատեղին և ծնողաց:


Այն ժողովուրդը՝ որուն դարաւոր նշանաբանը եղած է «Միրել Աստուած, Միրել Թագաւորը և Մի-

րել Հայրենիքը», վայելելով Ասցսերական կարգադրութեամբ այս նոր բարենորոգութեան արգասիքը, առաւել ևս խոր արմատացրեց երախտագիտութեան զգացմունքը, յարգանքը և սէրը դէպի իւր Թագաւորը:

Ադէքսանդր Բ. իւր ընդարդս բարեսրտութեամբ 19 փետրուարի—Ռուսաստանի նշանաւոր օրը բարեհաճեցաւ Ասցսերական հրովարտակաւ հրամայել ներքին գործոց Մինիստրին, յայտնել ակնուականներին, քաղաքային և զիւղասնտեսական տեսչութիւններին, քաղաքաբնակ և զիւղարնակ ժողովրդեան, նմանապէս և մասնաւոր անձանց իւր սրտագին շնորհակալութիւնը, այն ամենայն հանրագրերի (адресъ) և զոհարելութիւնների. համար, որով յայտնել էին նոքա իւրեանց հաւատարիմ հպատակութիւնը և ջերմեռանդ զգացմունքները:

Նոյն իսկ օրը առանձին հրովարտակաւ հաճեցաւ իւր ողորմութիւնը տարածել ընդհանուր ժողովրդեան վերայ, հաշուուած թեթեւացնելով նոցա վերայ ապառիկները:

Աւ այսպէս կրկին իւր բարերարութիւնը և խնամքը տարածելով հասարակաց վերայ Ադէքսանդր Բ. անմահացրեց իւր անունը. Ռուսաստանի ներկայ և սպագայ սերունդը միշտ պիտի օրհնեն Նորա անունը, Նորա յիշատակը շատ դարեր:



Ե.

Եղէքսանդր Կայսեր ծնունդը:— Երթում էր լուսինը:— Կրթութիւնը:— Ճանապարհորդութիւնները:— Կայսերական վարչութեան փոխանորդութիւնը:— Ստացած պարգևները և ամուսնութիւնը.

Երես.

3

Բ.

Սուսաստանի անցեալը:— Սևաստոպոլի պատերազմը:— Նիկողայոս Կայսեր մահը:— Եղէքսանդր Բ գահակալութիւնը:— Նորա նորանոր բարեկարգութիւնները:— Սևաստոպոլի անկումը:— Խաղաղութեան գաշինքը:— Թագադրութեան ժամագրութիւնը

7

Գ.

Եղէքսանդրի թագադրութիւնը:— Նորա հրովարտակը:— Երկու ողորմութիւնները:— Օխնուորների որդեց աղատութիւնը:— Կրթութիւնը:— Քաղաքական վիճակը:— Եղէքսանդրի «Եղատարար» կոչումը:— Նորա մարգասիրութիւնը:— Օխնուորների գաղթականութեան օրէնքի ջնջուիլը:— «Օխնուոր» բառի նշանակութիւնը:— Ե.ՅԼ և այլ զինուորական բարենորոգութիւններ.

10

Դ.

Սարուկների աղատութեան խնդիրը:— Ե.Յ առիթով սահմանուած ժողովքները:— Եղատութեան հրովարտակը:— Նոյա անտեսական բարօրութեան քաղաքականութեան և կրթութեան կանոնադրութիւնները

14

Ե.

Երես.

Մաշին անտեսական վարչութեան անյարմարութիւնները:— Նոր գիւղատնտեսական ինքնավարութիւնը:— Նորա օգուտները:— Կանոնները:— Քաղաքների անտեսական ինքնավարութիւնը.

18

Չ.

Կայսերական հրովարտակը հրապարակական բերանացի դատաստանի համար:— Ստորին, միջին և բարձր դատարաններ:— Կատաստանի կանոնները:— Կատապարտելի արգարութեան միջոցները:— Պատիժների թեթևութիւնը:— Պատժապարտական օրէնքը:— Բանտերի բարեկարգութիւնը:— Բանտարկեալների ապահովութիւնը:— Պարտապահանջութեան նոր կանոնները

21

Խ.

Նիկողայոս Կայսեր զօրքի բարելաւութեան փափազը:— Եղէքսանդր Կայսեր Սևաստոպոլի զօրքին այցելութիւնը և ցոյց տուած խնամքը:— Օխնուորականութեան ժամանակամիջոցի կարճացները:— Բնդհանրական համազգային զինուորագրութիւն:— Սոստանողների արտօնութիւնը զինուորագրութեան մէջ.

28

Ծ.

Օխնուորական և Բժշկական—Վիբարուժական Լեկազեմիանների բարենորոգութիւնը:— Օխնուորական գիմնազիոնների և մասնաւոր դպրոցների բացուիլը:— Օխնուորական նորանոր բարենորոգութիւնները:— Օխնուորական աստիճանաւորների ապահովութիւնները

34

Թ.

Եզգային լուսաւորութեան բարենորոգութիւնները:— Ըմբռնատութիւն ուսումնարանների գրութեան ընդհանրապէս՝ 25 տարի առաջ և այժմ:—

Երես.

Կանանց կրթութիւնը:—Նոցա գործօնէութիւնը:—
Ուսուցիչների աշխատութիւնը:—Մամուլը:—
Գրաքննական բարենորոգութիւն:—Պարբերական
հրատարակութիւններ:—Գրականական և մատե-
նագրական արդիւնաւորութիւն 39

Ժ.

Ուսաստանի դրամական վիճակը:—Փոխառու-
թեան շարժառիթները:—Գանձարանի եկամուտնե-
րի նոր աղբիւրները:—Վաճառականութեան դիւ-
րութեան և արդիւնաւորութեան միջոցները:—Եր-
կաթուղի, հեռագիր, ծովային հաղորդակցութիւն:—
Ներքին արդիւնաբերութիւն:—Մշտեալ և ներկայ
հաշիւներ:—Գանձարանի միութիւն 45

ԺԵ.

Ուսաստանի անցեալ և ներկայ ընդարձակու-
թիւնը:—Ժողովրդոց թիւը:—Պատերազմների այլ
և այլ շարժառիթները:—Նորանոր յաղթանակներ:
—Տիրապետութիւններ:—Մուր:—Աովկաս:—
Թիւրքիստան:—Սլաւոնական ցեղերի ազատութիւ-
նը:—Խաղաղական գաշինքը:—Մեղրիովկասեան
երկրի ընդարձակուիլը:—Ուսաստանի ցամաքային
և ծովածին պատերազմական ոյժը:—Օկնուորական
ծախքը:—Օկնուորական դպրոցների թիւը 50

ԺԸ.

Նորանոր խարենորոգութիւն:—Նորա գլխաւոր
սկզբնապատճառը:—Օսլոյրագոյն ժողովոյ կազմուի-
լը:—Նորա Նախագահ Աոմս Լորիս-Մելիքեանցի
իրաւունքները և գործքերը:—Սայսեր հօրեւիների
և ազատութեան առթիւ ժողովրդեան նուէրքնե-
րը:—Հայոց Հայրապետի նուէրը:—Սայսեր շնոր-
հակալեաց հրովարտակները 56



Գինն է 50 կոպ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0341278

